Ազգ
Azg
2 ՅՈՒՆԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 100(4719)
ISSN: 1829-1651

# Ապրիլի 24-ը ամեն տարի նշվելու է Իսրայելի խորհրդարանում

Այդ մասին նախորդ օրը նշել է թուրքական «Միլլիեթը»: Ըստ այս թերթի՝ Իսրայելի խորհրդարանի՝ Քնեսեթի նախագահ Ռիվլինն ընդունել է Երուսաղեմի հայ ազգային կոմիտեի պատվիրակությանը եւ ասել. «Ես որպես հրեա եւ իսրայելցի, իմ պարտքն եմ համարում ճանաչել այլ ժողովուրդների ողբերգությունը: Որքան էլ առկա լինեն դիվանագիտական մտահոգություններ, դա մեզ իրավունք չի տալիս ուրանալ մյուս ժողովրդի ողբերգությունը»: Վերջում Ռիվլինը նշել է ամեն տարի Քնեսեթում 1915-ի ցեղասպանության զոհերի համար հիշատակի օր նշանակելու ծրագրի մասին:

Ի դեպ, օրերս հայտնի ցեղասպանագետ Իսրայել Չառնին Երեւանում հայտարարել է, որ Իսրայելը սխալ է գործում՝ հրաժարվելով Հայոց ցեղասպանության ճանաչումից:

Հ. Չ.

# Երկխոսելու վերաբերյալ իշխանության առաջարկած օրակարգին սպասելիս

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՀԱԿ-ի դարակազմիկ հանրահավաքից հետո երեկ բոլորին մտահոգում էր այն հարցը, թե ի՞նչ է պատասխանելու իշխանությունը ՀԱԿ-ի առաջնորդի ասած պատվիրակություն կազմելու եւ արտահերթ ընտրությունների օրակարգով երկխոսության շուրջը բանակցելու առաջարկին, մանավանդ որ իշխանության տարբեր ներկայացուցիչներ երեկ շարունակում էին պնդել, թե արտահերթ ընտրությունների համար հիմք չկա: Ենթադրություններ էին արվում, թե միգուցե առաջին դեմքերը (իշխանության եւ ՀԱԿ-ի) գիտեն մի բան, ասենք խորհրդապահական գաղտնիքներ ղարաբաղյան հարցի մասին կամ մի այլ տարածաշրջանային նշանակության գաղտնիք, որը գուցե ՀԱԿ-ի առաջնորդին ստիպում է ընտրությունները քթի տակ նման առաջարկ պնդել կամ ձեւ անել, որ պնդում է: Գաղտնիքներն իրացնողները կամ դրա դեմն առնողները սովորաբար միմյանց պետք է որ հասկանան: Միգուցե արտաքին ճակատում վիճակն այնքան վատ է, որ ուզում են արտահերթ ընտրություններով խաբս տալ միջազգային հանրությանը, դրա մասին շարքային թիմակիցները դեռ գլխի չեն ընկնում եւ շարունակում են հորիզոնական պնդումները: Համենայն դեպս՝ Տեր-Պետրոսյանը հուշում էր, թե ղարաբաղյան կարգավորումը մոտենում է հանգուցալուծման: Դա նա եզրակացրել է դովիլյան հայտարարությունից եւ իր ձեռքի տակ եղած որոշ «խորհրդապահական տեղեկություններից», իսկ գործընթացի չբացառված հերթական ձախողման դեպքում՝ բավական իրական էր համարում Ադրբեջանի նախաձեռնությամբ պատերազմի վերսկսման վտանգը՝ ենթադրություն անելով, որ Ղարաբաղի խնդիրն առաջիկայում եւս շարունակելու է մնալ Հայաստանի ներքին քաղաքականության վճռորոշ ազդեցություն ունեցող գործոններից մեկը եւ ներքաղաքական շատ զարգացումներ այս կամ այն չափով պայմանավորված են լինելու այդ խնդրի առկայությամբ (ահա եւ բացատրությունը, այսինքն՝ շահարկման նյութ): Իսկ որ սոցիալական շարժումները ինչ-որ պահի կարող են դուրս գալ վերահսկողությունից եւ վերածվել համընդհանուր սոցիալական ըմբոստության՝ վտանգավոր թե՛ ժողովրդի, թե՛ իշխանության, թե երկրի համար, սա քաղաքական իրականություն եւ իրողություն չէ, այլ սոցիալական խնդիրների համախումբ, որը հենց Տեր-Պետրոսյանի ասելով ռեսուրս ունի լուծելու իշխանությունը, մանավանդ որ հենց նա է նշել, թե իշխանությունը «մեզանից լավ գիտե իրավիճակը եւ երկրի առջեւ կանգնած մարտահրավերներն ու խնդիրները»:

Տես էջ 3

ԲԱՔՈՒՆ ՍՊԱՌԵԼ Է ԻՐԵՆ

# «Մեռած են, թաղող չկա»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Եթե «Եվրոտեսիլում» «տարած հաղթանակի» եւ այդ կապակցությամբ Իլիամ Ալիեւի շոումեն փեսայի՝ Բաքվում կազմակերպելիք «մեծարման երեկոյի» թեման կամ «անեկդոտներ հայկական ԱԳՆ-ի մասին» հիմարությունն ու ոմն Ֆոմենկովի հետ «բացառիկ հարցազրույցն» են դառնում ադրբեջանական մեդիա-տիրույթի «թոփ-նորությունը», նշանակում է՝ պաշտոնական Բաքուն իրոք սպառել է «Երեւանին հուպ տալու» բոլոր մյուս հնարավորությունները: Եվ արդեն ակնհայտ «քյանդրբազություն» է անում:**

**Իրավիճակն, այնինչ, բավական լուրջ է: Ընդդիմությունն ուղղակի ծաղրում է իշխող կլանի «պատերազմական դոչիությունը»: Այս առումով ուշագրավ հրապարակում է արել «Ենի մուսավաթ»-ը՝ հանկարծ վերհիշելով ռազմաօդային եւ ՀՕՊ ուժերի հրամանատար եւ պաշտպանության փոխնախարար Ռահիլ Ռզաեւի սպանությունը, որ տեղի է ունեցել 2 տարի 3 ամիս առաջ:**

**Թերթն այդ կապակցությամբ կրկին հիշեցնում է, որ Բաքվում Համաշխարհային բանկի ներկայացուցչության շենքի մոտ, մշտադիտարկող տեսախցիկների առաջ կատարված սպանության փաստով հանցագործության ոչ իրականացնողն է առ այսօր ձերբակալված, ոչ էլ որեւէ այլ մանրամասնություն է հայտնի դարձել, բացի այն, որ ազգային անվտանգության նախարարության «բարձրակարգ մասնագետներից կազմված քննչական խումբը շարունակում է օպերատիվ-որոնողական ջանքեր գործադրել՝ բացահայտելու Ռզաեւի սպանությունը», ինչպես վերջերս ծանուցել է այդ գերատեսչության ղեկավարը:**

**Ընդսմին, «Ենի մուսավաթ»-ն իր աղբյուրները վկայակոչելով գրում է, որ գեներալի սպանությունն ամենայն հավանականությամբ «պատվիրել են անդրազգային մաֆիոզները»: Բանն այն է, որ ռազմաօդային ուժերի հրամանատարի ենթակայության տակ «տրանսպորտային ավիացիան չարտերային թռիչքներ էր իրականացնում աշխարհի տարբեր երկրներ՝ առանց բեռնափոխադրումների անհրաժեշտ ձեւակերպման, իսկ հասույթն ուղղակի գանձում էր գեներալ Ռզաեւը»: Ըստ տեղեկությունների, Ռզաեւն «այդ փողերի մի զգալի մասը յուրացրել է»:**

Տես էջ 2

# «Ինչի հասել եմ՝ պարտական եմ իմ ուսուցիչներին»

## *Հայաստանում տոնեցին Ժիրայր Դանիելյանի հոբելյանը*

**Երեկ Թեքեյան կենտրոնում տոնական տրամադրություն էր: Հայաստանի եւ սփյուռքի շատ մտավորականների մի հարկի տակ էր հրավիրել Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը՝ միասնական տոնելու եւ նշելու լիբանանահայ հայտնի մտավորական, բանասեր, մատենագետ, հայ մամուլի պատմության մասնագետ, կրթական գործիչ Ժիրայր Դանիելյանի ծննդյան 70 եւ գործունեության 50-ամյակները: Ազգանվեր հայորդի, ՀԲԸՄ Հովակիմյան եւ Դարուհի Հակոբյան դպրոցների երկարամյա տնօրեն, լրագրող եւ խմբագիր, մի քանի տասնյակ գրքերի հեղինակ, հասարակական գործիչ Ժիրայր Դանիելյանին ԹՄՄ ադամանդակուռ «Արարատ» ոսկե մեդալը հանձնեց ԹՄՄ նախագահ Ռուբեն Միրզախանյանը՝ բարձր գնահատելով տարիների անձնուրաց նվիրումն ու գործունեությունը:**

**«Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը, շնորհավորելով հոբելյարին, ներկայացրեց նրա բազմաբնույթ գործունեությունն ու ընթերցեց սփյուռքյան եւ հայաստանյան տարբեր կառույցներից ու պաշտոնատար անձանցից հղված շնորհավորանքները, գլխավորությամբ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի ուղարկած շնորհավորագրի: Օրվա բանախոս Երվանդ Տեր-Խաչատրյանը անդրադարձավ Ժիրայր Դանիելյանի գրական, հասարակական ու մանկավարժական գործունեությանը, որն էլ դարձել է ուղենիշ սերունդների համար: Հոբելյանական ձեռնարկի ընթացքում Ժիրայր Դանիելյանի կուրծքը զարդարեցին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե հուշամեդալը, ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» բարձրագույն շքանշանը, Հայաստանի ժուռնալիստների միության «Հավատարիմ մասնագիտության» առաջին ոսկե մեդալը, պատվոգրեր ու նվերներ... Ջերմ ու անկեղծ սրտի խոսք ասացին՝ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, ՀԺՄ նախագահ Աստղիկ Գեւորգյանը,**



ՀՀ ժող. արտիստ, պրոֆեսոր **Երվանդ Ղազանչյանը**, սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**, հոբելյարի մորաքույրը՝ **Գոհար Խաչատուրյանը** եւ այլք:

**Շնորհակալական խոսք ասաց հոբելյարն ու անկեղծորեն արտահայտվեց. «Հուզված եմ, ոչ մեկը ինձանից ավելի ինձ չի ճանաչում: Սակայն այսօր այստեղ հնչած իմ հասցեին խոսքերը լսելուց հետո «ես զիս ճանչցա», ես պարտք եմ կրկնակի, որ մորաքույրս՝ Գոհար Խաչատուրյանը ինձանով է հպարտ: Ես մեծանալով սփյուռքում, դաստիարակվեցի հայրենասիրությամբ, այդ ամենի համար պարտական եմ իմ ուսուցիչներին»:**

**Ձեռնարկը գեղեցկացնում էր Հանրային ռադիոյի սիմֆո-ջազ նվագախմբի (գեղղեկ եւ դիրիժոր՝ Երվանդ Երզնկյան) գեղեցիկ ելույթը:**

**Միջոցառումն ավարտվեց «Բանասիրութեան բաւիղներուն մէջ» Ժիրայր Դանիելյանի նոր գրքի շնորհանդեսով:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Բան Կի Մունը կոչ է անում շուտափույթ լուծել ղարաբաղյան հակամարտությունը

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը** Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ հանդիպմանը կոչ է արել շուտափույթ լուծում տալ ղարաբաղյան հակամարտությանը. «Անհրաժեշտ է ղարաբաղյան հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորում, եւ այդ ուղղությամբ արդյունքներ են ակնկալվում», ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը: Ադրբեջանական լրատվամիջոցները երեկ այս լուրը հայտնելիս որպես աղբյուր նշում էին երկրի ԱԳՆ մամուլի ծառայությունը: Ադրբեջանի ԱԳ նախարարը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ներկայացրել է հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի մասին ադրբեջանական տեսակետները:

# Պենտագոնը համակարգչային գրոհը կհամարի ռազմական գործողություն

ԱՄՆ-ի դեմ համակարգչային գրոհի ձեռնարկումը կարող է համարվել իրական ռազմական գործողություն: Ի պատասխան՝ Պենտագոնը իրավունք կունենա հարվածելու կիբեռգրոհ կազմակերպած երկրին: Սրանք են համակարգչային անվտանգության առաջին պաշտոնական ռազմավարության դրույթները, որից քաղվածքներ կիրապարակվեն արդեն հունիսին:



Պենտագոնում պատրաստված է 30-էջանոց զեկուցագիր, որի գաղտնազերծված տարբերակն ունի ընդամենը 12 էջ: Փաստաթղթին ծանոթացած զինվորականները եզրակացնում են. պատերազմի վարման ավանդական օրենքները կիրառելի են նաեւ կիբեռնետիկայում:

Մասնագետները խոստովանում են համակարգչահենային գրոհների մեծ վտանգը ատոմային ռեակտորների, մետրոպոլիտենների եւ խողովակաշարերի կառավարման ցանցերի համար, նշում է «Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը:

ԱՄՆ-ում կարծում են, որ հուժկու կիբեռգրոհներն անհնար են առանց տվյալ երկրի կառավարական ծառայությունների օգնության: Պենտագոնի ներկայացուցիչները պաշտոնապես չեն քննարկում հավանական կիբեռագրեսորների հարցը, բայց Պենտագոնում եւ ԿՀՎ-ում խոստովանում են, որ ԱՄՆ-ի դեմ էլեկտրոնային հարձակումներ կարող են իրականացնել Ռուսաստանը եւ Չինաստանը: Ասում են, թե ՉԺՀ-ի բանակում կան վիրտուալ ճակատի մարտիկներ:

Կիբեռգրոհների դեմ պայքարի լավագույն եղանակը համարվում է կիբեռզենք պատրաստող երկրներին պատասխանատվության կանչելը: Սակայն ԱՄՆ-ում չի բացառվում նաեւ վիրտուալ գրոհներին ի պատասխան իրական հարվածներ հասցնելու հնարավորությունը:

## Ընթացիկ

# Սփյուռքը գործուն հիշողությունն է կորսված հայրենիքի մասին

Դարձյալ պարտքեր: Իմ պարտքերը: Գրառումներիս տետրերը պարզապես միանգամից վերածվել են նաեւ մուրհակների, որ ինձ ստիպում են ապրել «մարված պարտքերի» սկզբունքով: Իսկ այդ տետրերի քանակն աճում է անպատմելի արագությամբ: Բայց նախ կուզենայի ասել, որ բոլոր ուղղությունների վրա գտնվող, տարբեր օվկիանոսների ջրերով ողողվող համարյա թե բոլոր մայրցամաքներում, որտեղ հայկական համայնքներ կան, շատ հաճախ, ասես պայմանավորված, մարդիկ սկզբում զարմանք են հայտնում եւ ապա խորհուրդներ տալիս: Խոսքն այն մասին է, թե ինչու չեմ օգտվում համակարգչից, թեեւ դիմում եմ ինտերնետի ծառայություններին: Ես, իհարկե, այդ մասին ոչ մեկին չեմ ասում: Պարզապես ամեն ինչ ակնհայտ է, քանզի ամենուր հետս քարշ եմ տալիս գրամեքենան, ինչն ինքնին զարմանք է առաջացնում, որն էլ իր հերթին հարցեր է ծնում եւ մանավանդ՝ խորհուրդներ այն մասին, թե որքան հարմար է համակարգչով աշխատելը: Համաձայնում եմ, բայց շարունակում եմ իմն առաջ տանել: Շատ ավելի բարդ է ինտերնետի հարցը: Չէ՞ որ, ճիշտն ասած, ձեւացնում եմ, երբ ասում եմ, թե ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ հասկանում այդ ինտերնետներից, որոնք արդեն խաչուղիներով «համաշխարհային սարդոստայն» կամ «աղբանոց» են կազմել: Ավելին, հիանալի գիտեմ եւ այն, թե դա այսօր որքան կարեւոր է համամոլորակային մակարդակով: Ֆենոմենալ մի շտեմարան է: Ալեքսանդրիայի գրադարանը՝ լուցկու տուփում: Միաժամանակ անպայման հավելում եմ, թե իբր անհրաժեշտություն չկա գրադարան գնալու, տանը գրքեր պահելու, ավելացնելով արդեն մի նախադասություն, որն ակամա վիրավորանք է հասցնում համաշխարհային մշակույթին. «Ամբողջ Դոստոեւսկին կարելի է գրպանում ունենալ»: Անձամբ ես հոգեպես հանգիստ ու ապահով եմ զգում՝ իմ տան գրադարանում տեսնելով Դոստոեւսկու վեպերի տասնվեց հատորները, չհաշված նույն ծավալի նամակագրական ժանրի ժառանգությունը: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե ինտերնետում կարելի է կարդալ ամեն ինչի մասին, ապա ես բացարձակապես չեմ հավատում, թե ներկայումս մոլորակը, այդ թվում նաեւ Հայաստանը, այն օգտագործում են գրքեր կարդալու համար: Սակայն ես այլ բան եմ ուզում ասել: Այն, որ համարյա վեց տասնամյակ ձգվող իմ ստեղծագործական աշխատանքի ընթացքում ես չեմ կարողանում այլ կերպ վարվել: Ահա միայն մեկ օրինակ: Երկար ժամանակ է, ինչ «Արմենիա»-ն լողում է Խաղաղ օվկիանոսի հենց այն վայրերում, որտեղ անխիղճ կերպով սպանել, ոչնչացրել են ամբողջ քաղաքակրթություններ: Դա նշանակում է՝ ամբողջ ժողովուրդներ: Եվ վերջին մոհիկանները դեպի չգոյություն են մեկնել իրենց աստվածներով հանդերձ, մեծ թվով աստվածներ, առանց որոնց կյանքն անպատկերացնելի էր: Չէ՞ որ մի բանի պետք է հավատային մարդիկ: Այդ թվում՝ նաեւ ծովայինները:

Համարձակորեն կարելի է պնդել, որ նույնիսկ ոչ թե պարզապես նավազների, այլ հենց ծովագնացների առաջին աստվածը, ավելի ճիշտ՝ աստվածուհին եղել է Իսիդան, եգիպտական Օսիրիս աստծո կինը եւ քույրը: Այսօր ինտերնետից հաստատ կարելի է իմանալ, որ այդ աստվածները բավական իմաստուն կերպով «դերաբաշխում» էին կատարել: Ամուսինը մեռնող եւ հարություն առնող բնության աստվածն էր, կինը՝ ոչ միայն ծովագնացների, այլեւ, ինչը լիովին տրամաբանական է ծովայինի համար, ջրի, քամու, առագաստի եւ դեռ ի հավելումն՝ ամուսնական հավատարմության: Ի դեպ, Օսիրիսի եւ Իսիդայի որդի Հորը արեւի աստվածն էր: Ընդհանրապես Եգիպտոսում արեւի աստվածները շատ էին, այդ թվում եւ Ռան, որի անունը շատ հազարամյակներ անց այդքան բարձրաձայն փառաբանեց Թուր Հեյերդալը:

Եվ հիմա, հավանաբար շուրջերկրյա նավարկության նախապատրաստվելիս, բացի ամենայնից, կարելի է ինտերնետից տեղեկանալ, որ մեզ համար պահապան-հրեշտակներ կլինեն Օսիրիսի ընտանիքի բոլոր անդամները: Բայց ահա ինչպե՞ս իմանալ ինչ է հարկավոր անել խելացի, իմաստուն եւ վստահ կերպով դժվարություններին նախապատրաստվելու եւ դրանք հաղթահարելու համար: Այստեղ արդեն անհրաժեշտ է մարդկության դարերով կուտակած փորձը: Այստեղ արդեն պետք է դիմել փիլիսոփաներին ու պատմագետներին: Եվ նաեւ պետք է իմանալ՝ նրանցից ում: Հանուն հետաքրքրության ծանոթներիցս շատերին հարցրեցի այդ մասին: Եվ շատերն էլ պատասխանեցին, որ բացի ծովային գործի եւ առագաստավարության գիտելիքներից, առաջին հերթին պետք է քաջություն հավաքել: Եվ հենց այստեղ էլ մի իսկական շիլա-շփոթ սկսվեց: Բոլորը տարբեր կերպ էին մեկնաբանում քաջության իմաստն ու էությունը, ավելի հաճախ այն նույնացնելով համարձակության, խիզախության, սեփական անձն ու մերձավորներին մահից չվախենալով պաշտպանելու կարողության հետ: Իմ կարծիքով, ճշմարտությանն ավելի մոտ էին նրանք, ովքեր գտնում էին, թե քաջությունն այն է, երբ քո առջեւ նպատակ ես դնում եւ ոչինչ չես խնայում այն իրագործելու համար: Սակայն սա նույնպես վեճերի ու տարակարծությունների տեղիք է տալիս: Դիմենք մի մարդու, որը ե՛ւ պատմաբան էր, ե՛ւ փիլիսոփա, ե՛ւ նույնիսկ հրապարակախոս: Դա Հերոդոտն է, որին Ցիցերոնը անվանել է պատմահայր:

*Տես էջ 8*

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Լազարեւսկում կազմախանդված Անդրանիկի արձանը կտեղադրվի Ադլերում

Ըստ «7 օր» լրատվական կայքի՝ Ռուսաստանի հայերի միության Սոչիի բաժանմունքում ընդլայնված նիստ է տեղի է ունեցել, որին ներկա է եղել Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ **Գերման Անանյանը**: Նիստի ընթացքում խոսվել է Լազարեւսկի շրջանի Վոլկոնկա ավանում տեղադրված զորավար Անդրանիկի հուշարձանի կազմախանդման հարցի մասին: Անանյանը հայտնել է, որ Ռուսաստանի հայերի միության Լազարեւսկի շրջանի ղեկավարությունը հրաժարական է տվել՝ ընդունելով իր մեղքը Անդրանիկի արձանի կազմախանդման հարցում: Ըստ Գ. Անանյանի՝ շուտով հուշարձանը կտեղադրվի Ադլերում: Նիստին պետք է ներկա լիներ նաեւ միության նախագահ Արա Աբրահամյանը, որ նախօրեին աշխատանքային այցով գտնվում էր Երեւանում, սակայն նա չի մասնակցել: Ավելի վաղ տեղի ունեցածի մասին լսելուց հետո **Արա Աբրահամյանն** ասել էր, թե այդ խայտառակության մասին առաջին անգամ է լսում. «Հենց վերադառնամ, անձամբ կպարզեմ տեղի ունեցածը, եւ եթե տեղեկությունն իրականությանը համապատասխանում է, ապա կկայացվեն ամենաարմատական որոշումները»: Զորավար Անդրանիկի արձանի կազմախանդման վերաբերյալ իրենց վրդովմունքն են հայտնել նաեւ Ռուսաստանի հարավում Հայաստանի գլխավոր հյուպատոս **Արարատ Գոմցյանը**, ՀՅԴ եւ «Ժառանգություն» կուսակցությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ Ռուսաստանի ջավախահայերի ու համշենահայերի համայնքների ղեկավարները:

# Պետք է աջակցենք Ադրբեջանի քաղաքացիներին

**Առաջին հարցը, որ կարող է առաջանալ վերնագրից, թերեւս՝ ինչո՞ւ կամ ի՞նչ: Սակայն նախքան այդ հարցերին պատասխանելը, եկեք հասկանանք, թե խոսքը Ադրբեջանի կոնկրետ ո՞ր քաղաքացիների մասին է: Գաղտնիք չէ, որ հարեւան երկրում ադրբեջանցիներից բացի բնակվում են նաեւ լեզգիներ, թալիշներ, ավարներ, «լեռնցի հրեաներ» եւ այլք: Գաղտնիք չէ նաեւ, որ հարեւան երկրում նրանք բոլորը՝ սահմանադրորեն, համաձայն անձնագրերի՝ Ադրբեջանի քաղաքացի են, առանց ազգությունը շեշտելու, մի խոսքով՝ նրանք բոլորը «ադրբեջանցի են»: Մինչդեռ նրանցից յուրաքանչյուրը իր խնդիրներն ունի ազգային փոքրամասնությունների մասին օրենք չունեցող ու Ղարաբաղի հայերին ինքնավարության խոստումներ տվող Ադրբեջանում: «Ազգը» նախորդ համարներում որոշակիորեն անդրադարձել է թալիշների ու լեզգիների խնդիրներին, առաջիկայում մենք ավելի մանրամասն կտեղեկացնենք Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների կենսապայմաններին, ունեցած, իսկ ավելի ճիշտ՝ «չունեցած» ռեսուրսներին, հնարավորություններին եւ այլն: Այս թեմայով երեկ հրավիրած ասուլիսում քաղաքագետ Հրանտ Մելիք Շահնազարյանը ընդգծեց, որ հայկական կողմերը պետք է ցույց տան միջազգային հանրությանը, որ Ադրբեջանում լեզգիները, թալիշներն ու ավարները ունեն ազգային խնդիրներ: Բանախոսը նույնիսկ նկատեց, որ Ղարաբաղում պատերազմի վերսկսման պարագայում մենք՝ ի դեմս ադրբեջանական ազգային փոքրամասնությունների, կարող ենք ունենալ բնական դաշնակիցներ: Ինչ խոսք, բնական դաշնակիցներ՝ ի դեմս Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների, մենք կարող ենք ունենալ ոչ միայն Ղարաբաղում պատերազմ վերսկսվելու, այլեւ քարոզչական պատերազմի պարագայում, դիվանագիտական երկխոսություն ծավալելիս: Հրանտ Մելիք Շահնազարյանի տեղեկացմամբ՝ այդ փոքրամասնությունների առաջնորդները հիմնականում բնակվում են Ադրբեջանից դուրս եւ հնարավորություն չունեն վերադառնալու Ադրբեջան, այս հանգամանքն, անշուշտ, կարող է լրացուցիչ խթան լինել նրանց հետ համագործակցելու համար: «Իսկ ակտիվիստներից շատերը ադրբեջանական բանտերում են», նշեց բանախոսը:**

**Ասուլիսի մյուս հյուր՝ տեղեկատվական անվտանգության մասնագետ Վահրամ Միրաքյանը, ընդգծելով, որ այսօրվա Ադրբեջանը «մինի նացիստական պետություն է», նշեց, որ Հայաստանը պետք է լրատվական օգնություն ցուցաբերի Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների տեղեկատվական կայքերին, որպեսզի աշխարհում առավել լսելի դառնա վերջիններիս ձայնը: Անշուշտ՝ «թշնամու թշնամին» ոչ միշտ է բարեկամ, սակայն սա չի նշանակում, որ նրանք չեն կարող լինել լուրջ գործոն՝ սեփական արդարությունն ու ճշմարտությունը ապացուցելու համար:**

Հ. ԱՓՅԱՆ

# Փոստանջյանի բողոքի նամակը ԵԽԽՎ մշտական կոմիտեն քննարկել է



Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում տեղի ունեցած ԵԽԽՎ մշտական կոմիտեի նիստում մայիսի 27-ին, այլ հարցերի թվում քննարկվել է նաեւ Հայաստանի ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի դիմումը եղբոր՝ Տիգրան Փոստանջյանի նկատմամբ իրականացվող ապօրինությունների վերաբերյալ: ԵԽԽՎ «Եվրոպայի միավորված ձախեր» խմբի նախագահ Տինի Կոխը «Ժառանգություն» խմբակցությանը տեղեկացրել է, որ Զարուհի Փոստանջյանի՝ 30.05.2011 թվականի բաց նամակը նույնպես քննարկման առարկա է դառնալու:

Ընդունվել է ԵԽԽՎ ամառային նստաշրջանի 2011 թվականի հունիսի 20-24-ը տեղի ունենալիք լիագումար նիստի օրակարգի նախագիծը, համաձայն որի՝ 2011 թվականի հունիսի 22-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պետք է ելույթ ունենա, որից հետո նրան հարցեր կիղեն ԵԽԽՎ պատվիրակները:

# «Մեռած են, թաղող չկա»

*1-ին էջից*

Մահվանից մի շաբաթ առաջ Ռզաեւի սեփական ավտոմեքենան, որ գտնվել է տեխզննման կետերից մեկում, գնդակոծվել է: «Դա նախազգուշացնում էր, որ փողերը վերադարձնելու ժամանակն սպառվում է», գրում է ընդդիմադիր պարբերականը եւ հավելում, որ մինչ այդ ռազմաօդային եւ ՀՕՊ ուժերի հրամանատարն «իր կյանքին սպառնացող վտանգի մասին հատուկ զեկուցագիր էր ղրկել պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւին, որը, սակայն, մնացել էր անարձագանք»: Թերթն, այսպիսով, թերեւս ակնարկում է, որ Աբիեւն «անմասն չէ Ռզաեւի սպանության գործից», քանի որ խոսքը տասնյակ-հարյուրմիլիոնավոր դոլարների մասին է, որ գեներալ-լեյտենանտ Ռզաեւն, ամենայն հավանականությամբ, չէր կարող տնօրինել, եթե չունենար պաշտպանության նախարար եւ գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւի «դաբրոն»:

Այսպիսին է, ահա, իրական իրավիճակն իրական Ադրբեջանում: Նախագահական «ներողամտությամբ» բանտից «ազատություն է դուրս եկել» ընդդիմադիր լրագրող Էյնուլլա Ֆաթուլլաեւը, բայց չգիտի, թե ինչ պիտի անի: «Զերկալո» թերթին տված հարցազրույցում նա այսպես է բնութագրել իր վիճակը. «Ես բանտ նստեցի գլամուր ավտորիտարիզմի երկրում եւ դուրս եկա դաժան բռնապետության երկիր, որտեղ վերականգնված են խորհրդային կարգերը, իսկ խորհրդային երկրում անհնար է մտածել անկախ լրագրություն ունենալու մասին»: Տպավորությունն այն է, որ Ֆաթուլլաեւի համար բանտում ավելի լավ էր, քան «ազատության մեջ», ուստի նա մտածում է «կամ լռելու, կամ այլ երկիր արտագաղթելու եւ այնտեղ ամեն ինչ նորից սկսելու նպատակահարմարության մասին»: Ամեն դեպքում, նա իլհամալիեւյան «ազատության» մեջ գործելու հնարավորություն չի տեսնում:

Իսկն ասած, դա ոչ ոք չի տեսնում, բացառությամբ «սուլթանովյան» պնակալեզների, որոնցից մեկի խելքին փչել է թիրախ ընտրել... Ալլա Պուգաչովային: Այո, այո, մի զարմացեք: Բանից պարզվում է, որ հեռուստաշոուի ժամանակ ռուսաստանյան էստրադայի պրիմադոննան հայ կատարող Կ. Քոչարյանին գնահատելիս ասել է. «Տղերքն իրավունք չունեն լացելու, հայ տղերքը՝ հատկապես»: Եվ դա առիթ է հանդիսացել, որ 1news.az-ի պալատական «մեկնաբանն» սկսի քչփորել երգչուհու «սավանները» եւ մի ողջ «պատմություն» հորինել նրա, Ռայմոնդ Պաուլսի եւ Կոնստանտին Օրբելյանի մասին: Իբր՝ ոչ թե Օրբելյանն է «եղել Պուգաչովայի «Մաեստրո» երգի հերոսի նախատիպը, այլ՝ Պաուլսը»: Թե ի՞նչ է փոխվում դրանից՝ սա արդեն «մեկնաբանի» խելքին հասու չէ: Կամ նրան ուղղակի «Սուլթանովի ապարատից», որ նույնն է թե՝ Ռամիզ Մեհթիեւից, զանգել եւ պատվիրել են, որ «հասարակության առաջ սավաններ թափ տա»: Հավանաբար ճիշտ է, որ «ճաշակին ընկեր չկա»:

Եվ, այդուհանդերձ, մենք դատապարտված ենք ապրել ադրբեջանցի մարդկանց հարեւանությամբ: Ուստի չէինք ցանկանա, որ Իլհամ Ալիեւի վարչակազմը նրանց մշտապես պահեր մոլորության եւ մոլեգնող հայատյացության ենթակայության տակ: Եվ մինչ եվրոպացիները հորդորում են, որ Ադրբեջանը վերջ տա պաշտոնական հայատյացությանը, մենք ընդամենը խղճում ենք այն հանրությանը, որ դա հանդուրժում է: Քանի որ ի վերուստ է ասված. «Ինչ դատով որ դատես, նրանով էլ կդատվես»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

Երբ զրույցների ժամանակ ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանին փորձում են համոզել, որ Երեւանն էլ պետք է ունենա բարձրահարկ շենքեր եւ օրինակ են բերում Նյույորքյան երկնաքերները կամ Դուբայի բարձրահարկ շենքերը, ճարտարապետը հերթական անգամ հիշեցնում է, որ Երեւանը սեյսմիկ տարածաշրջանում է: Կրկնվող երկրաշարժերի պատմությունն արդեն ապացուցել է, որ 100 տարին մեկ Երեւանում ուժեղ ցնցումներ են գրանցվում: Թեպետ Սպիտակի երկրաշարժից անցել է 20 տարի, սակայն ողբերգությունից ո՛չ քաղաքային իշխանությունները, ո՛չ էլ բիզնեսմենները եզրակացություններ չարեցին:

# Մայրաքաղաքի սեյսմակայունությունը` վտանգված

«Պետք է գիտակցենք, որ Երեւանը ճապոնիա չէ: Ճապոնիայի բարձրահարկ շենքերը խիստ հսկողության տակ են: Վերջին երկրաշարժի ժամանակ էլ բարձրահարկ շենքերի մեծ մասը պահպանվեց: Մինչդեռ Հայաստանում բարձրահարկ շենքերի հսկողությունը շատ քիչ է: Կառույցների խտությունը մեծ է: Օգտագործված տեխնոլոգիան այնպիսին է, որ եթե նույնիսկ շենքի կարկասը մնա, խտության ժամանակ եզրերը փակող նյութերը կթափվեն, եւ կստեղծվի մի վիճակ, երբ փրկարարները չեն կարողանա մոտենալ` մարդկանց տարհանելու համար», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասում է **Մկրտիչ Մինասյանը**:

Մայրաքաղաքի հատկապես կենտրոնում խտությունը շատ մեծ է: «Այդ խտությունը սովորական պայմաններում էլ է նկատվում: Երեւանն անընդհատ վատ ռեժիմի մեջ է: Պատճառն այն է, որ խտությունը որոշ հատվածում խիստ կենտրոնացած է: Հատկապես սարսափելի է Թումանյան-Հանրապետության հրապարակ-Հյուսիսային պողոտա հատվածի շենքերի խտությունը: Ներդնողները ցանկանում են հենց Հանրապետության հրապարակի հարեւանությամբ բնակելի շենքեր կառուցել, որովհետեւ այստեղ գները բարձր են: Սակայն պետությունը նրա համար է, որ այդ ներդնողներին բացատրի, որ ինքն ունի նաեւ քաղաքի այլ հատվածներ, եւ առաջարկի այնտեղ ծավալել շինարարություն»:

Ինչպես յուրաքանչյուր երկրում, Հայաստանում էլ կան սահմանված քաղաքաշինական չափանիշներ, թե քաղաքի որ հատվածում ինչպիսի հեռավորության եւ ինչ բարձրության վրա պետք է կառուցվեն բարձրահարկ շենքերը: Սակայն մի քանի տարի առաջ մեկնարկած հախուռն շինարարության ժամանակ բոլոր օրենքները անտեսվեցին:

Եթե բարձրահարկ շենք է, ապա դիմացի շենքից իր բարձրության մեկուկես չափով պետք է հեռու լինի: Եթե կողքի շենք է, ապա պետք է 10-12 մետր հեռու լինի, որպեսզի պահովի լույսի, օդի պահանջվող չափաքանակը: Սակայն Երեւանում նորակառույցներ կան, ուր անգամ 6 մետր հեռավորությունը պահած չէ:

«Այս պարագայում քաղաքային իշխանությունները պետք է տարածքի սեփականատերերին պարտադրեն, որ տարածքի 40 տոկոսը միայն կառուցապատեն, որպեսզի շենքը ողջ տարածքով նստած չլինի: Մեզ մոտ դրանք չեն պահվում: Նրանք, ովքեր կառուցում են շենքեր, հսկայական կարողությունների տեր մարդիկ են, լծակներ ունեն` ստիպելու գլխավոր ճարտարապետին, քաղաքապետին` օրենքի կետերը խախտելու եւ անգամ անօրինական կառույցներ ստեղծելու»:

Մինասյանի գնահատմամբ` վտանգավոր են հատկապես այն շենքերը, որոնք կառուցվել են խորհրդային տարիներին ու նախատեսված են 7-բալանոց երկրաշարժի համար: Դրանք հիմնականում կենտրոնում կառուցված շենքերն են, որոնք 50 տարի շահագործվել են առանց հիմնանորոգման եւ այսօր խոցելի են:

«Շենքերն անողոք շահագործում ենք, չենք վերանորոգում, ամրացնում: Եվ մի օր 3-4 բալանոց երկրաշարժից այդ շենքերը փուլ կգան: Բացի դրանից` շենքերի նկուղային հարկերն առանց ամրացնելու օգտագործում են, բետոնե ձեղնահարկեր կառուցում, որը հսկայական ծանրություն է տալիս առանց այդ էլ մի կերպ կանգուն մնացող շենքին: Փաստորեն մենք մեր ձեռքով դառնում ենք մեր գերեզմանափորը, հաշվի չառնելով, որ անփութությունն ու շահամոլությունը կարող են շատերի մահվան պատճառ դառնալ»:


Բարձրահարկ շենք Հրազդանի ձորի եզրին

Օրենքով արգելվում է դպրոցի հարեւանությամբ բարձրահարկ շենքեր կառուցել, սակայն կարելի է քայլել Երեւանի փողոցներով եւ համոզվել, որ կենտրոնում գտնվող միջնակարգ դպրոցները շրջապատված են բարձրահարկերով:

«Կան բացարձակ նորմեր, որոնք չի կարելի խախտել: Դրանցից մեկն էլ վերաբերում է դպրոցների եւ բարձրահարկերի միջեւ հեռավորությանը: Սարյանի փողոցի դպրոցի հարեւանությամբ վեր խոյացող բարձրահարկն անգամ փակել է կրթական հաստատության մի քանի լուսամուտներն, ու դասարանները զրկվել են լույսից»:

Ճարտարապետը նշում է, որ վտանգի տակ է Սարի թաղի սարահարթը: Վտանգավոր են հատկապես այն բարձրահարկերը, որոնք կառուցվել են կիրճի եզրին: Երկրաշարժերի ժամանակ առաջին հարվածը հենց այդ շենքերը կկրեն:

Մինասյանը հիշում է, որ Սպիտակի երկրաշարժից հետո անգամ օրենք ընդունվեց, ըստ որի արգելվում էր 9 հարկից բարձր շենք կառուցել: «Բայց հետո այդ որոշումը մոռացանք, որովհետեւ բարձրահարկ շենքերը տալիս են ավելի շատ եկամուտ: Եղան դեպքեր, երբ հաստատված 9-հարկանիի նախագիծը ընթացքում դարձավ 12: Զարմանում եմ, որ սխալներից դասեր չենք քաղում»:

Մինասյանն ընդգծում է, որ շենքերի խտության պատճառով հատկապես մեծ է հրդեհների վտանգը:

«Քաղաքային իշխանությունների ավելի քան 10 տարվա ամենաթողության հետեւանքով շենք սարքելու մոլուցքը բերեց նրան, որ բակերի հիմնական մուտքերը փոքրացան, այսօր բակ դժվարությամբ են մտնում անգամ փոքր մեքենաները, ուր մնաց` հրշեջ մեքենաները: Դա էր պատճառը, որ անցյալ տարի «Պոնչիկանոցի» հարեւանությամբ բռնկված հրդեհը տարածվեց ամբողջ բակով: Շենքերը համարյա իրար կպած էին, բակն էլ շատ փոքր էր, եւ միանգամից մի քանի հրշեջ մեքենա չէր կարող աշխատել»:

Մինասյանը հավելում է, որ քաղաքի տեսքն այսօր քիչ թե շատ, մի կերպ ու բազմաթիվ վերապահումներով գոնե տանելի է: Այսօր արդեն մայրաքաղաքի սեյսմակայունությունը վտանգված է, վաղը Երեւանում հնարավոր չի լինի երթեւեկել, քայլել ու շնչել: Միակ ելքը` Երեւանն այլեւս շինհրապարակ չօգտագործել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կապի տարածաշրջանային համագործակցության նիստ Երեւանում

Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ) կապի վարչակազմերի ղեկավարների 44-րդ նիստը երեկ բացվեց Երեւանում, որին մասնակցում էին Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, Ռուսաստանի Դաշնության կապի նախարար Իգոր Շոգլեւը, Բելառուսի կապի եւ տեղեկատվայնացման նախարար Նիկոլայ Պանտելեյը, Ղազախստանի կապի եւ տեղեկատվայնացման նախարար Ասկար Ժումագալիեւը եւ ԱՊՀ երկրների այս ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Նիստի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանը**: Նա կարեւորեց ԿՏՀ նշանակությունը, տեղեկացնելով, որ նիստի ընթացքում կքննարկվեն ռադիոկապի, փոստային կապի, արբանյակային կապի եւ ընդհանրապես հեռահաղորդակցության բնագավառում համագործակցության հարցերը: Նա նաեւ ներկայացրեց Հայաստանում կապի ոլորտում վերջին տարիներին արձանագրած զարգացումները: Համաձայն դրանց, բջջային կապը հասանելի է դարձել երկրի ամբողջ տարածքում այստեղ մենաշնորհի վերացումից հետո, զգալիորեն իջել են սակագները, ավելացել են նաեւ ֆիքսված կապի բաժանորդները, իսկ անալոգային կապի փոխարեն անցում է կատարվել թվային կապի: Մանուկ Վարդանյանի տեղեկացմամբ, ինտերնետ օգտագործողների թիվը Հայաստանում վերջին 2 տարում ավելացել է 6 անգամ եւ կազմում է բնակչության մոտ մեկ երրորդը:

Նիստի շրջանակներում տեղի ունեցան նամականիշների մարումների արարողություններ, շրջանառության մեջ դրվեցին ԿՏՀ 20-ամյակին նվիրված նամականիշ, Հայաստան-Ռուսաստան եւ Հայաստան-Բելառուս 2-ական նամականիշներ:

Ա. Մ.



# Երկխոսելու վերաբերյալ իշխանության առաջարկած օրակարգին սպասելիս

1-ին էջից

Ու թե ի՞նչ են քննարկելու «առաջիկայում իշխանության ու ՀԱԿ-ի միջեւ ակնկալվող դժվարին երկխոսության ընթացքում», որի ժամանակ պետք է որոնվեն երկրի, պետության եւ ժողովրդի կենսական շահերից բխող լուծումները, եւ դա անգամ «ողջունվող գործարք է», որի արդյունքում երկրի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական վիճակը մի այն ձեւի հիմնովին է փոխվելու, որ տարբեր ուժեր (Տեր-Պետրոսյանի եզրույթով` «մունդռոցներ») խիստ անհանդուրժված են այդ հեռանկարից, սա դեռ երկվա դրությամբ անհասկանալի էր: Իսկ էլի Տեր-Պետրոսյանի խոսքերով` առավել «ամենանյարդայնացած» եւ խուճապահար անձը, այն է` Ռոբերտ Քոչարյանը, էլի երեկվա դրությամբ պատասխան չէր հնչեցրել ՀԱԿ-ի առաջնորդի ածականներին, նույն կերպ լռություն էր «անհանդուրժված իրավապահ մարմիններում», որոնց աշխատակիցներին, էլի Տեր-Պետրոսյանի խոսքով, իր վերջին հարցազրույցով «փուռն է տվել» նախագահ Սարգսյանը, մինչդեռ «նյարդայնացածը» նրանց երեւի խոստացած է եղել չդատել: Ճիշտն ասած` այս բոլորն այնքան պրիմիտիվ է, որ անգամ զարմանալի է նախագահ եղած մարդուց այսպիսի տրիվիալ քինախնդրության դրսեւորումը, քանի որ նրա նախագահության օրոք հատկապես նրան փուռը տալու շատ առիթներ են եղել: Ավելորդ չէ սպասել, որ այս քանի օրը «նյարդայնացած» Քոչարյանի պատասխանի ձայնը կլսվի, եւ ժողովրդին զբաղեցնելու տեսարանների պակաս չենք ունենա (գուցե դա էլ նպատակ է): Իսկ իշխանություն-ՀԱԿ «գործարքի մասին ճամարտակողներ», «սեւ կատու մութ սենյակում», «գործարքաբաններ», իր փոխարեն Օբամայի ասած` «առաջ շարժվելու միակ ճանապարհը իշխանության եւ ընդդիմության երկխոսությունն է», այս բոլորը խոսքի նորաբանություններ են, գեղեցիկ ոճավորում, եւ միայն, էությունը, ժողովրդի տված պարզ բնութագրումներն ավելի մոտ են իրականությանը:

Մի մուշտարու հայացք եւս ձգելով ՀԱԿ-ի ապագա անելիքների վերաբերյալ Տեր-Պետրոսյանի ելույթի հատվածին, ինչն էլ մոտակա քաղաքական իրադարձությունների բանալին է, «խոստելի մեկփայլանի լուծումների» մասով նկատենք, որ, այո, Տեր-Պետրոսյանն անհայտ ելքերով քայլ անելու կողմնակից երբեք չի եղել, ընդունում ենք, ու նաեւ հենց նա է նշել հանրահավաքում, որ քաղաքացիական ակտիվությունը համապատասխան կանդիդիայի չի հասել (եւ հազիվ էլ այդպիսի կանդիդիա լինի-Մ.Խ.), այնպես որ ՀԱԿ-ը կտրականապես մերժում է հեղափոխական ճանապարհը (շուտ ասեիք` այս վերջին հանրահավաքին եկածների իսկի մեկ երրորդն այլեւս չէր գա), հեղափոխություն անող չկա, իսկ արտահերթ ընտրություն էլ պահանջվում է, քանի որ երկրից կարող է.... բան չմնալ: Ճշգրիտ սոցիոլոգիական հարցումներ էլ, թարսի պես, երկրում չկան, եւ Տեր-Պետրոսյանի ժամանակից է դրանց հերն անիծվել («100 տոկոս քվե էլ ստացած լինեն` իշխանություն հանձնողը չենք»), իսկ որ երկխոսությունը երկուստեք եւ ոչ թե միակողմանի խաղ է` ոչ ոք չի կասկածում: Արտահերթը` արտահերթ, բայց համ էլ լսելու են իշխանության հակաառաջարկները, ուրեմն եւ հիմա շատ կարեւոր է, թե ի՞նչ է առաջարկելու իշխանությունը: Հացպանյան-Բոջոլյան խառնելը մարտավարական, բայց անկապ հիմնավորում է` նրանց ժամկետը լրացել է, դուրս են գալու, ՀԱԿ-ն այստեղ անելիք չունի: Իսկ որ «իշխանության անդրդվելիության պարագայում չի բացառվում արաբական տարբերակը»` լավ կլինի այս միտքը Տեր-Պետրոսյանը հայելու առաջ ասի եւ իրեն էլ ուղարկ լսի` կտեսնի, թե որքան անիրական է այս միտքը հնչում այսօր հայոց իրականության մեջ, պարբերական հանրահավաքների մասին էլ Տեր-Պետրոսյանն առայժմ պետք է մոռանա, քանի որ այս խեղճ, բզկտված ու հոգնած հանրահավաքավորը իր հարցերի պատասխանը չի ստացել վերջին երեք հանրահավաքներում, եւ դեռ երկար չի ուզենա գալ Ազատության հրապարակ: Բայց, իհարկե, նոր քաղաքական իրավիճակն արդեն ՀԱԿ-ն ու իշխանությունը կարող են ուղղորդել առանց հանրահավաքի, միայն ներքաղաքական նեղ «կռուգում», դա ընդունում ենք: Իհարկե, երկխոսության օրակարգի մասին հայտարարության գնդակը, ինչպես հիմա ընդունված է ասել, իշխանության դաշտում է, այն էլ ամենաբարձր` Հայաստանի նախագահի մակարդակով, որովհետեւ բոլորն էլ գիտեն, որ արբիտրը նա է: Թեեւ երեկ իշխանական օթյակներից այդ վերաբերմամբ հստակեցումներ եղել են, բայց ինչպես ավելի վեր նշել ենք` երեւի դրանք հորիզոնական հավաստումներ են, խորքայինին դեռ պետք է սպասել: Հայաստանի Ազգային ժողովի նախագահը լրագրողների հետ շփվելիս ասել է, թե երկխոսությունը կկազմակերպի Հայաստանի նախագահը, անդրադառնալով Տեր-Պետրոսյանի` 2-3 հոգանոց պատվիրակություն կազմակերպելու եւ երկխոսելու վերաբերյալ իշխանության հետ բանակցություն սկսելու առաջարկին: Իսկ թե իշխանությունն այդպիսի պատվիրակություն ձեւավորելո՞ւ է, այս հարցին ի պատասխան ԱԺ նախագահը նշել է, թե այդ ֆորմատը դեռ չի քննարկվել, բայց առաջիկայում այդ մասին հայտնի կդառնա, իսկ ընդհանրապես` իշխանությունը պատրաստ է քննարկել ցանկացած ողջամիտ առաջարկ: Ասուլիսներով հանդես եկած տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ էլի կրկնել են իշխանության հայտնի թեզը` արտահերթ ընտրությունների համար որեւէ հիմք չկա: Մասնավորապես` ՀՀԿ-ական Գագիկ Մինասյանը ոչ մի օբյեկտիվ պատճառ չի տեսել այդպիսի ընտրությունների համար, բայց եւ նշել է, թե երկխոսելու բազմաթիվ այլ հարցեր կան` «կլինի երկուստեք ընդունելի եւ տրամաբանական օրակարգ», որպեսզի կատարվեն մթնոլորտն առողջացնելու երկուստեք նպատակները, եւ հերթական ընտրությունները բարձր գնահատականի ընտրություններ լինեն: Արտահերթ ընտրությունների համար քաղաքական եւ իրավական հիմքեր երեկ դեռ շարունակում էր չտեսնել ՕԵԿ-ական Հովհաննես Մարգարյանը: Հիմա բոլորը սպասում են նախագահ Սարգսյանի պատասխանին` Տեր-Պետրոսյանի բաց տեքստով առաջարկներին: Թե ինչ օրակարգ կառաջարկի նա` երեւի շատ շուտով կիմանանք:

# Ադրբեջանական դեմոկրատական հանրապետություն. չգոյության պատմությունը

Երբ մենք ասում ենք, որ Ադրբեջանական դեմոկրատական հանրապետությունը որպես պետություն գոյություն չի ունեցել, հարեւան երկրում դրանից խիստ վիրավորվածի տեսք են ընդունում: Բայց, պարզվում է, անգամ Բաքվում չեն կարողանում լիովին կեղծել փաստերն ու իրողությունները:

1994թ. լույս է տեսել «**Ալիմարդան-բեկ Թոփչիբաշեւի դիվանագիտական գրառումները**»: Գիրքը խմբագրել եւ առաջաբանը գրել է Ադրբեջանի այն տարիների ԱԳ նախարար **Հասան Հասանովը**:

Թոփչիբաշեւը «կառավարության» հանձնարարականով ուղարկվել է Կոստանդնուպոլիս, որպեսզի Թուրքիայի իշխանությունների հետ քննարկի «Ադրբեջանի ինքնուրույնության ճանաչման հարցը»: Նա մտադիր է եղել առաքելությունը շարունակել Բեռլինում եւ Վիեննայում: Նման առաքելությամբ Թուրքիա, Ավստրիա եւ Գերմանիա «արտակարգ եւ լիազոր նախարար» գործուղելն ինքնին վկայում է Ադրբեջանի «կառավարության» կատարյալ անիրազեկության մասին: Այն ժամանակ ակնհայտ էր, որ Թուրքիան ու նրա դաշնակիցներ Ավստրո-Հունգարիան եւ Գերմանիան Առաջին համաշխարհային պատերազմը տանուլ են տալիս, ուստի չէին կարող որեւէ ազդեցություն ունենալ Ադրբեջանի «ինքնուրույնության ճանաչման» հարցի վրա:

1918թ. հոկտեմբերի 2-ին Թոփչիբաշեւն ընդունելության է եղել Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթի մոտ: Նա զգուշորեն ակնարկել է, որ մտադիր է մեկնել Վիեննա եւ Բեռլին: Պատասխանը դիվանագիտական պատշաճությունից դուրս կոպիտ եւ միանշանակ է. «Ադրբեջանի ինքնուրույնությունը չեն ճանաչում ոչ Գերմանիան, ոչ Ավստրո-Հունգարիան, ոչ Ռուսաստանը», ուստի «ձեզ պետք է մնալ այստեղ»:

Թալեաթը նույնիսկ պարզ ասում է, որ Բեռլինում բոլշեւիկյան Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Իոֆեն Թուրքիային է վերագրել «Ռուսաստանից Կովկասի մուսուլմանների անջատվելը»: Անգամ Ադրբեջանի «ինքնուրույնության» հովանավոր Թուրքիայի վարչապետն է խոստովանել, որ այդ կապակցությամբ միջազգային վերաբերմունքը կատարյալ մերժողական է: Նա ակնարկել է, որ ոչ ոք, անգամ Թուրքիայի դաշնակից երկրները, չեն հավատում, որ Բաքվում «ինքնուրույն կառավարություն է գործում»:

Նույն վերաբերմունքն է արտահայտում նաեւ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Սամի-բեյը: Իրավիճակը բավական ծիծաղելի է. «Պատիվ ունեմ ներկայանալու՝ ադրբեջանական կառավարության անդամ Ալիմարդան-բեկ Թոփչիբաշեւ... Ադրբեջանական կառավարության համապատասխան մանդատը ես պատիվ կունենամ ներկայացնելու հիմա», ասում է ներկայացողը, հնչում է այս պատասխանը. «Ներողություն մի քաշեք ներկայացնել մանդատը, մենք ձեզ հետ դեռ կտեսնվենք»:

Ահմեդ Սամի-բեյը հետաքրքրվում է, թե ինչպիսին է վիճակն Ադրբեջանում: Թոփչիբաշեւն անթաքույց հասկացնում է, որ առանց Թուրքիայի հովանու Ադրբեջանը ոչինչ անել չի կարող: Ահմեդ Սամի-բեյի արձագանքն ուղղակի սպանիչ է. «Թուրքական կառավարությունն, անկասկած, միշտ է պատրաստ ձեզ օգնության գալու: Հիմա ձեզ մոտ բանակ է կազմավորվում եւ միջոցներ են ձեռնարկվում ֆինանսներ ապահովելու: Ձեզ աշխատանք է սպասում Ադրբեջանի սահմանների հաստատման եւ ընդհանրապես ձեր հարեւանների՝ վրացիների եւ հայերի հետ սահմանազատման ուղղությամբ: Այդ կապակցությամբ ձեզ պետք կլինի, որ ինքներդ վերջ դնեք ներքին սահմանային վեճերին, որը կբերի ձեր եւ նրանց միջեւ բարի հարեւանական կյանքի...»:

Եթե վերծանենք Թուրքիայի արտգործնախարարի ասածը, ապա կստացվի, որ Թուրքիան «հռչակել է ինքնուրույն Ադրբեջան», կազմավորել նրա բանակը, օգնել ֆինանսապես, բայց մտադիր չէ այդ «կառավարության» տարածքային հավակնություններին բավարարում տալ: Հանդիպումը շատ կարճ է տեւել: Վերոհիշյալ հայտարարությունն անելուց հետո Ահմեդ Սամի-բեյը Թոփչիբաշեւին քաղաքավարի «դուրս է հրավիրել»՝ ասելով. «Թույլ տվեք այդ հարցով ձեզ անհանգստացնել մի որոշ ժամանակ հետո»:

Հաջորդ օրը Թոփչիբաշեւն արժանացել է Թուրքիայի ռազմական նախարար Էնվերի ընդունելությանը: Ադրբեջանի «կառավարության» ներկայացուցիչը նախ Էնվերին է փոխանցել Կովկասյան իսլամական բանակի գլխավոր հրամանատար Նուրի փաշայի «սելամ»-ը, որին նա «թողել է ողջ-առողջ», բայց՝ «կլանված երկու հարցի լուծմամբ. իր կազմակերպած ադրբեջանական զնդերը զենքով եւ հագուստով մատակարարելու եւ Բաքվի գրավմամբ»: Թոփչիբաշեւը հրապարակ է հանում իր ողջ պերճախոսությունը. «Փաշա, մենք գիտակցում ենք, որ ամեն ինչի համար պարտական ենք ձեզ, եւ ես հանդգնում եմ առանց որեւէ չափազանցության խիզախորեն ձեզ զեկուցել, որ նման ծանր խնդրի համար (նկատի ունի Բաքվի գրավումը-Վ.Ա.) ձեր եղբոր գործուղելն էլ ավելի է ձեր անձին գամել կովկասյան մուսուլմանների սրտերը, որոնք նախկինում էլ պաշտում էին ձեզ՝ որպես թուրքական հանճարի պայծառ աստղի»:

Էնվերը խոստանում է օգնել, ուղարկել տեսուչներ, քանի որ «Բաքվի ճակատից մեր զորքերի մի մասը հետ է վերադարձվելու, երկու դիվիզիաներից մեկը», իսկ այնուհետեւ Թոփչիբաշեւին խորհուրդ է տալիս մեկնել ոչ միայն Բեռլին եւ Վիեննա, այլեւ՝ Շվեդիա, Հոլանդիա, Կոստանդնուպոլսում հանդիպել ե՛ւ պատերազմող, ե՛ւ չեզոք երկրների դեսպանների, «եւ անձնական այցելությունների, մամուլի քարոզչության որքան հնարավոր է հաճախ հիշեցնել Ադրբեջանի մասին որպես կատարելապես ինքնուրույն պետության»:

Թոփչիբաշեւի «դիվանագիտական առաքելության» առաջին փուլն ավարտվում է Թալեաթի կառավարության հրաժարականով: Հոկտեմբերի 21-ին նա արդեն այցելում է Թուրքիայի նոր վարչապետին: Իրավիճակը կտրուկ փոխված է. վարչապետ Իզզեթ փաշան խոստովանում է, որ «Թուրքիան պարտված է, մենք պիտի համախմբենք ջանքերը, որպեսզի պաշտպանենք մեր շահերը»: Թոփչիբաշեւը, սակայն, դարձյալ պնդում է, որ առանց «ավագ եղբոր օգնության Կովկասի մուսուլմանների համար դրությունը վատ, շատ վատ է լինելու», Իզզեթ փաշան ավելի է մեկնաբանում. «Բնական է, բնական է, ավագ եղբայրը միշտ օգնելու է, պարտավոր է օգնել կրտսերին՝ ինչով միայն կարող է: Բայց ինքներդ եք տեսնում, որ հանգամանքները փոխվել են, կտրուկ փոխվել է մեր եւ մեր դաշնակիցների դրությունը: Խոսքի իրավունքը հիմա մեզ չի պատկանում, այլ Վիլսոնին (նկատի ունի ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին-Վ. Ա.) եւ նրա կողմնակիցներին»:

Հոկտեմբերի 27-ին Թոփչիբաշեւը հանդիպում է Թուրքիայի նոր արտգործնախարարին եւ անմիջապես դժգոհում, որ մի քանի անգամ ցանկացել է տեսակցել, բայց նախարարը «զբաղված է եղել»: Կատարելապես անիմաստ խոսակցություն է ծավալվում: Թոփչիբաշեւը դարձյալ աջակցություն է խնդրում, նախարար Նաբի-բեյը՝ հասկացնում, որ «իրավիճակը արմատապես փոխվել է, դուք ազատ եք մերձենալ որեւէ երկրի հետ»: Տպավորությունն այն է, որ Թուրքիան ուղղակի իրենից փորձում է թոթափել Ադրբեջանի «ինքնուրությունը ճանաչելու» բեռը:

Բայց Թոփչիբաշեւը համառ է: Նա բարձրացնում է Ադրբեջանում թուրքական դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու հարցը եւ նկատում, որ այդպիսիք նշանակված են Վրաստանում եւ Հայաստանում: Պատասխանը խուսափողական է՝ «այդ մասին կմտածենք»: Այստեղ առաջին անգամ Թոփչիբաշեւը բարձրացնում է Ղարաբաղի հարցը. «Հայերն այդպես են անվանում նախկին Ելիզավետպոլի նահանգի չորս՝ Շուշիի, Ջեւանշիրի, Ջեբրայիլի եւ Զանգեզուրի գավառները: Դրանք բոլորը մտնում են Ադրբեջանի տարածքի կազմի մեջ, եւ մեր կառավարությունն իրավունք է ունեցել այնտեղ ուղարկել իր զորքերը, որպեսզի իր տարածքում վերականգնի հանդարտությունը»: Նա հետաքրքրվում է, թե ինչ քայլեր է ձեռնարկել թուրքական կողմը, որպեսզի «հայերն աղմուկ չբարձրացնեն»: Նախարարի պատասխանը հնչում է կտրուկ. «Ոչ մի քայլ այդ կապակցությամբ չի ձեռնարկվել: Բայց պահի տեսակետից, իհարկե, նման գործողությունից, որպիսին զորքեր ուղարկելն է, պետք է ձեռնպահ մնալ»:

Նոյեմբերի 3-ին տեղի է ունենում Թոփչիբաշեւ-Թուրքիայի ծովային նախարար Ռաուֆ-բեյ հանդիպումը: Որեւէ հուսադրող խոսք չի հնչում: Ծովային նախարարն, ընդհակառակը, հասկանալ է տալիս, որ թեեւ իր վերաբերմունքն Ադրբեջանի հանդեպ մնում է անփոփոխ, բայց «այժմ ամբողջ ուշադրությունը, բնականաբար, ուղղված է Թուրքիային, որին մեծագույն վտանգ է սպառնում... Անտանտի դաշնակիցների պահանջները դաժան են, բայց ինչ կարող ես անել, մենք պարտված ենք, նրանք՝ հաղթող»:

Թոփչիբաշեւ. «Խոսք չկա, ամենից առաջ պետք է հոգ տանել Թուրքիայի մասին, որի բարեկեցությունից է կախված նաեւ մեր բարեկեցությունը: Դա մեր պարտքն է՝ որպես որդու՝ հոր հանդեպ: Բայց ինձ վրա դրված մյուս պարտքն էլ պահանջում է մշտարթուն հոգ տանել Ադրբեջանի շահերի մասին: Այսօրվա թերթերում հայտարարված՝ ձեր ստորագրած զինադադարի պայմանների լրիվ թվարկումը ինձ բոլորովին տագնապեցրել է եւ ստիպել անհանգստանալ մեր Ադրբեջանի ճակատագրի համար: 11 եւ 15 կետերով մեզ հասցված է լիովին զգալի հարված, մենք չենք մասնակցել ձեր եւ անտանտականների բանակցություններին, եւ առանց մեր իմացության Ադրբեջանի մայրաքաղաքը եւ մեր անդրկովկասյան երկաթուղին տրված են անգլիացիներին»:

Նախարարն ստիպված է եղել ընդհատել եւ հասկացնել, որ դա հաղթող դաշնակիցների պահանջն է, նրանք պնդել են, որ «Բաքուն գրավված է թուրքական զորքերի կողմից, Ադրբեջանի սահմաններում երկաթուղու կառավարումը թուրքերի ձեռքին է»: Թոփչիբաշեւը նորից է պնդում, որ «նրանք կարող էին սխալվել», ինչին նախարարը կոպիտ հակադարձում է. «Պարոն, մենք դա ցույց ենք տվել եւ մի քանի անգամ ընդգծել, որ Բաքուն մեր քաղաքը չէ, դրա համար էլ իրենք՝ անտանտականները պետք է բանակցությունների մեջ մտնեն ադրբեջանական կառավարության հետ, բայց անգլիացիները մեզ կտրականապես հայտարարել են, որ իրենք, ինչ գնով էլ լինի, Բաքուն վերցնելու են, եւ քանի որ «այնտեղ ձեր մարդիկ են՝ զինվորականներ, ապա հարկ է երաշխիքներ ունենալ, որ դուք՝ թուրքերդ դրան չեք խանգարելու»: Եվ նրանք պնդել են, որ դա մտցվի զինադադարի պայմանների տեքստ»:

Հանուն հաճույքի չէ, որ այս ամենը գրվում է: Ոչ: Խնդիրն այլ է. ադրբեջանցի առաջին դիվանագետներից մեկի գրառումներով վկայել, որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը, որպես անկախ եւ ինքնիշխան պետություն, նույնիսկ Թուրքիայի կողմից լիովին ճանաչված չի եղել: Իսկ ինչ վերաբերում է խնդրի միջազգային ընկալմանը, ապա շատ պարզ է, որ թե՛ Թուրքիայի դաշնակիցները, թե՛ հաղթած երկրները եւ, առաջին հերթին, Մեծ Բրիտանիան, Ադրբեջան անվանված տարածքը համարել են Թուրքիայի կողմից գրավված, ուստի զինադադարի մասին համաձայնագրով Օսմանյան կառավարությանը պարտավորեցրել են այնտեղից դուրս բերել իր զորքերը: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, ապա ինչպես վերեւում տեսանք, նույնիսկ Օսմանյան կառավարությունն է դեմ եղել, որ Ադրբեջանը «հարցը լուծի այնտեղ զորքեր ուղարկելով»:

Այդ պահից սկսած Թոփչիբաշեւի դրությունը կատարյալ ծիծաղելի է դառնում: Նա ներկայանում է արտաքին գործերի նախարարի ընդունարան, սակայն վերջինիս տեղում չի գտնում: Զրուցում է օգնականի հետ: Հաջորդ օրը վերջապես կայանում է բաղձալի հանդիպումը: Կրկին խոսք է բացվում Բաքուն եւ երկաթուղին անգլիացիներին զիջելու մասին: Նախարարը կոպիտ է պատասխանում. «Գիտեմ, գիտեմ: Այդ պարտավորվածությունը մենք ստիպված ենք եղել ընդունել անտանտականների ներկայացուցիչների պահանջով, նրանք հատկապես պնդել են, եւ մենք չէինք կարող չընդունել, եթե ցանկանում էինք զինադադար կնքել»: Թոփչիբաշեւը վերջին հուսահատ փորձն է անում եւ ասում, թե հույս ունի, որ «դուրս չեն բերվի այն զորքերը, որ կամավոր անցել են մեր կողմը»: Հավանաբար խոսքը թուրքական այն զորամիավորումների մասին է, որ գտնվելով Բաքվում, պետք է զինադադարի պայմանավորվածության շրջանակներում դուրս բերվեին: Նախարարը պատասխանում է. «Ընդհանրապես, նախկինում սխալ է թույլ տրվել՝ այնտեղ զորք ուղարկելով: Լավ կլիներ, եթե դա չլիներ, այդ դեպքում ձեր դրությունն էլ այդքան ծանր չէր լինի»:

Թոփչիբաշեւի դիվանագիտական գրառումներում Ղարաբաղի հարցին անդրադարձներ կան: Թուրքիայի արտգործնախարարի հետ հանդիպմանը նա վերստին փորձում է Օսմանյան կառավարությունից երաշխիքներ պոկել: Հնչում է նրա համար անցանկալի պատասխան: «Բանն ամենեւին էլ հանդարտություն հաստատելու մեջ չէ: Հայերն ասում են, որ Ղարաբաղում մեծամասնությունն իրենք են: Ձեզ եւ հայերին անհրաժեշտ է Ղարաբաղի վեճը կարգավորել սիրով: Մի մոռացեք, որ այնտեղ, որտեղ հայերը մեծամասնություն են, նրանք անպայման առավելություն կունենան, նրանց կպաշտպանեն բոլոր պետությունները, հատկապես՝ անտանտականները, վերջապես դա կհամապատասխանի նաեւ Վիլսոնի պահանջներին եւ սկզբունքներին: Ես ձեզ խնդրում եմ ծանուցել ձեր կառավարությանը, որ գործի հատկապես այդ ուղղությամբ»:

Այս եւ այլ հարցերում Թոփչիբաշեւը փորձում է «փոխըմբռնման հասնել» դաշնակից երկրների ներկայացուցիչների հետ: Թուրքիայից որեւէ հույս նա արդեն չունի: Հետաքրքրական է նրա եւ անգլիական գնդապետի հանդիպման սղագրությունը.

**Գնդապետ**. Պարոնայք, դուք Ադրբեջանից եք, այդպես չէ՞:

**Թոփչիբաշեւ.** Այո, պարոն գնդապետ:

**Գնդապետ**. Ուրեմն դուք պարսիկներ եք, քանի որ Ադրբեջանը Պարսկաստանում է:

**Թոփչիբաշեւ.** Ո՛չ, պարոն գնդապետ, մենք կովկասյան Ադրբեջանից ենք:

**Գնդապետ**. Ա, դա Բաքուն եւ շրջակայքն է, այդպես չէ՞:

**Թոփչիբաշեւ.** Այո՛, Բաքվի, Ելիզավետպոլի, Զաքաթալայի նահանգները եւ այլն:

**Գնդապետ**. Ձեր տարածքը որքա՞ն է:

**Թոփչիբաշեւ**. 85-95 հազ. քառ. կմ:

**Գնդապետ**. Դուք աշխարհագրական քարտեզ ունե՞ք: Որտե՞ղ է Ղարաբաղը: Մենք լսել ենք, որ վերջերս դուք էքսպեդիցիոն կորպուս եք ուղարկել Ղարաբաղ, որն այնտեղ ոչնչացրել է շատ հայերի եւ որ նույնը տեղի է ունեցել Բաքվում, երբ քաղաքը գրավել են թուրք-թաթարական միացյալ ուժերը: Թուրքերը ոչնչացրել են հայ բնակչության գրեթե կեսը, եւ մեզ համար ծանր էր լսել ձեր կողմից հայերին ոչնչացնելու մասին:

**Թոփչիբաշեւ.** Պարո՛ն, դեպքերը, որի մասին դուք խոսում եք, բավական հին են եւ տեղի են ունեցել երեք ամիս առաջ: Ներկայումս ամեն ինչ վերադարձել է բնական վիճակին, ամենուր կատարյալ կարգուկանոն է տիրում: Ղարաբաղի հարցը երկու կողմերին անհանգստացնող խնդիր է: Ճիշտ է, որ Ղարաբաղի մի մասը բնակեցված է հայերով, շուրջ 200 հազ. բնակիչ, բայց այդ մարզից այնկողմ բարձր լեռներ են՝ մասամբ քրդերով բնակեցված, մասամբ՝ դատարկ, որ պատկանում են մուսուլմաններին եւ ծառայում են որպես ամառային արոտավայրեր: Քանի որ Ղարաբաղի մուսուլման բնակչության մեծամասնությունն ապրում է անասնապահության հաշվին, ապա իրենց լեռներից զրկվելը նրանց համար կնշանակի կատարյալ տնտեսական աղետ:

**Գնդապետ**. Այդ ամենը հետաքրքրական է, բայց պետք է ընդունվի ամեն ժողովրդի՝ իր բախտն ընտրելու ազատության սկզբունքը:

Նոյեմբերի 25-ին Թոփչիբաշեւը հանդիպում է Թուրքիայի ռազմական նախարար Աբդուլլա փաշային: Խոսակցության հիմնական թեման Ղարաբաղն է: Օսմանյան կառավարության ռազմական նախարարը պահանջում է ստույգ տեղեկություններ, թե ե՞րբ եւ ինչո՞ւ է Ադրբեջանի «կառավարությունը» Ղարաբաղ զորքեր ուղարկել: Թոփչիբաշեւը խուսափողական պատասխաններ է տալիս: Ամեն ինչից զգացվում է, որ խոսակիցները միմյանց հասկանում են: Այդուհանդերձ, Աբդուլլա փաշան կտրուկ պնդում է. «Մեզնից պահանջում են Ղարաբաղի հայերին անվտանգ պահել, եւ մենք դա պարտավոր ենք անել»:

Թոփչիբաշեւը Կոստանդնուպոլսում մնացել է երկար: Այնտեղից էլ որպես ադրբեջանական պատվիրակության ղեկավար մեկնել է Փարիզ: Բայց նրա դիվանագիտական առաքելությունը ոչ Ադրբեջանի «ինքնուրույնության ճանաչման», ոչ Ղարաբաղի հարցում որեւէ հաջողություն չի արձանագրել:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Կոկոսյան Վանուատուի աբխազական ճանաչումն ու Վրաստանի «Ազատության խարտիան»

Վրաստան-Ռուսաստան հարաբերությունները մեր տարածաշրջանի պակաս խնդրահարույցներից չեն, անգամ եթե համեմատենք հայ-ադրբեջանական իրավիճակի հետ, այն պարզ պատճառով, որ չհայտարարված պատերազմի պայմաններում կողմերը կարողանում են հայտարարել մեկ բան, անել մեկ ուրիշը, իսկ մի երրորդ ուղղությամբ էլ մտածել ապագայի մասին: Երկու երկրների պարագայում էլ ակնհայտ է, որ որոշ քայլեր ձեռնարկվում եւ անգամ իրագործվում են ոչ թե դրանց ժամանակային անհրաժեշտությունից ելնելով կամ տվյալ պահին խնդրի հրատապությամբ պայմանավորված, այլ մյուս երկրին որեւէ կերպ վնասելու մղումով:

Երբ վրացական խորհրդարանը ոտուձեռ ընկած քննարկում էր ու «առաջանցիկ» տեմպերով ընդունում էր Ռուսաստանում չերքեզների ցեղասպանության ճանաչման բանաձեւը, բնավ էլ արդարությունը վերականգնելու կամ դրանում իր լուման ներդնելու նպատակից չէր ելնում, այլ հարեւան Ռուսաստանին եւս մեկ խնդիր առաջադրելու ցանկությունից, հատկապես եթե հաշվի առնենք, որ չերքեզական կոտորածների ու տեղահանությունների վերջին շրջանում Կովկասյան պատերազմի հաղթարշավում իր մասնակցությունն ուներ նաեւ Վրաստանը:

Մյուս կողմից, որքան էլ ցանկանանք, Ռուսաստանի կողմից Աբխազիան ու Հարավային Օսիան 2008-ի օգոստոսին ճանաչելու հանգամանքն էլ բնավ չի տեղավորվում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կողքին կանգնելու մղումներում, այլ հստակորեն նպատակ ուներ եւ ունի հարցադրումներ առաջ քաշել վրացական համատեքստում:

Զուտ տարածաշրջանային առումով այս հակադրությունը, որ 2008-ի օգոստոսի սկզբին ռազմական բախման տեսք ընդունեց ու բազմաթիվ զոհերի պատճառ դարձավ, այսօր էլ շարունակում է՝ ռուս-վրացական հարաբերություններում նոր խաղաքարտեր ներմուծելով: Այն ժամանակ, երբ մայիսի 31-ին Վանուատու խաղաղօվկիանոսյան կղզային պետությունը ճանաչում է Աբխազիայի անկախությունը, վրացական խորհրդարանն իր հակառուսական տրամադրություններում ակնհայտորեն ընկնում է նույն ծայրահեղության մեջ, որում իր քաղաքականությունը դրսեւորում է Ռուսաստանը՝ ֆաշիստական սիմվոլիկային հավասարեցված ու մեկտեղ արգելելով նաեւ խորհրդային խորհրդանիշների օգտագործումը:

Մայիսի 31-ին մոտ 200 հզ. բնակչություն եւ մոտ 80 կղզի ունեցող Վանուատուն դարձել է Ռուսաստանից հետո Աբխազիան ճանաչող 4-րդ պետությունը՝ Նիկարագուայից, Վենեսուելայից եւ Նաուրուից հետո: Պարզվում է, որ հիմնականում գյուղատնտեսությամբ, ընդ որում՝ կոկոսի աճեցմամբ զբաղվող, նաեւ զգալի քանակով զբոսաշրջիկներ ընդունող Վանուատուն արդեն իսկ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Աբխազիայի հետ, իսկ անկախության ճանաչումն էլ կապված է Աբխազիայի նախագահ Սերգեյ Բաղապշի մահվան հետ՝ ի հիշատակ:

Նույն օրը՝ մայիսի 31-ին վրացական խորհրդարանն էլ շարունակում էր հակառուսական տրամաբանությունը՝ տեղավորելով այն հակասովետական դրսեւորումների մեջ: Մասնավորապես, այդ օրը Վրաստանի խորհրդարանն ընդունեց «Ազատության խարտիան», որով արգելվում է երկրի տարածքում ֆաշիստական եւ կոմունիստական սիմվոլիկան, սահմանափակում է նախկին կոմունիստական եւ կոմերիտական պաշտոններ զբաղեցրած եւ հատուկ ծառայությունների աշխատակիցներ եղած անձանց աշխատանքի հնարավորությունը Վրաստանի անվտանգության խորհրդում, նախագահի աշխատակազմում, խորհրդարանի աշխատակազմում եւ իշխանության այլ մարմիններում:

Այդ մարդիկ չեն կարող ղեկավար պաշտոններ զբաղեցնել անգամ բուհերում: Այդ փաստաթղթի համաձայն, իբր անվտանգության նկատառումներից ելնելով, վրացական բանկերը պարտավոր են իրավապահներին տեղեկացնել արտերկրից խոշոր դրամական փոխանցումների մասին:

Թե որքանով է նման փաստաթուղթը ժողովրդավարական, թերեւս կասեն մասնագետները, բայց որ շատ է հիշեցնում վրացի հայտնի քաղաքական, սովետական, կոմունիստական գործչի ռեպրեսիվ գործունեությունը, հաստատ է:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Վրաստանում «ոտնահարվում են» տեղի ադրբեջանցիների կրոնական իրավունքները

Վրաստանի ներկա խռովահույզ իրադարձությունների ֆոնի վրա հազիվ թե հրատապ է սույն թեման: Մյուս կողմից, եթե ռուսաստանյան ԶԼՄ-ները քննարկում են խնդիրը, ուրեմն հեռահար ենթատեքստեր ունի:

Միխեիլ Սաակաշվիլու սրտակոտոր հայտարարությունները վրաց-ադրբեջանական եղբայրության ու նույնիսկ համադաշնություն ստեղծելու մասին քիչ հավանական է, որ հուզեն որեւէ մեկի՝ վրացու թե ադրբեջանցու: Անշուշտ, երկու երկրների քաղաքական-տնտեսական զգալի շահեր համընկնում են (հակաանջատողականություն, նավթագազատարներ եւ այլն): Ակնհայտ է նաեւ, որ երկկողմ հարաբերություններում Վրաստանին վիճակված է կրտսեր գործընկերոջ դերը, այն էլ՝ բազմակի խոցելի: Առավել եւս, երբ խոսքը վերաբերում է ազգամիջյան, ներազգային դյուրագրգիռ առնչություններին:

Ասում են՝ ղարաբաղյան շարժման մեծագույն ծառայություններից մեկն այն է, որ հայոց հողն ախտահանվեց ադրբեջանական վիրուսից. մորեխի պես բազմացող այդ ցեղատեսակը անտանելի գլխացավանք կդառնար Հայաստանի համար: Իսկ գիտակցո՞ւմ են դանդաղ գործող ռումբի պարագան վրացիները: Չեն կարող չգիտակցել: Ահա եւ հարեւան երկրում ստեղծվել է Վրաստանի մուսուլմանների կրոնական նոր վարչություն, որի ղեկավարությունը հայտարարել է Կովկասի մուսուլմանների վարչությունից անկախանալու մասին: Վերջինս տեղաբաշխված է Բաքվում եւ միավորում է տարածաշրջանի հավատակիցներին:

Նորաստեղծ վարչության ղեկավար Ջամալ Բագշաձեն հայտարարել է, որ մտադիր է միավորել երկրի բոլոր մուսուլմանական համայնքները: Բայց «պարադոքսն» այն է, որ վարչության ղեկավարության մեջ չկա ոչ մի... ադրբեջանցի, իսկ ազերիների քանակն անցնում է կես միլիոնից: Ավելին, այդ գլխաքանակը պատկանում է իսլամի շիա ուղղությանը, իսկ ահա վրացի մուսուլմանները, որոնք գերազանցապես բնակվում են Աջարիայում, սուննի են: Սա էլ դեռ ոչինչ, նաեւ պարզվում է, որ կրոնական կոչված վարչության հիմնադիր վրացի անդամները աշխարհիկ անձնավորություններ են, որոնցից ոմանք նույնիսկ զբաղեցնում են պետական պաշտոններ:

Բնական է, որ վրացիների այս քայլը չէր կարող չառաջացնել Կովկասի մուսուլմանների վարչության դժգոհությունը: Սրա նախագահ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեի կարծիքով, տվյալ գործողությունը բարի նպատակներ չի հետապնդում, քանի որ կարող է բաժանիչ գործոն դառնալ Վրաստանի ադրբեջանցիների եւ... Ադրբեջանի միջեւ: Ուստի անհրաժեշտության դեպքում հարցը կքննարկվի առաջին հերթին նրանց հետ: «Այդ իրադարձությունը մեկօրյա գործ չէ, ասել է նա, դա սկսվել է այն օրվանից, երբ ընդունվեց Վրաստանի քառախաչ դրոշը»:

Շատ ավելի կտրուկ էին արձագանքները բուն Ադրբեջանից: Իսկական «ազերիները» ընդվզում են այն բանի դեմ, որ վրացիներն անում են ամեն ինչ տեղացի ադրբեջանցիներին իրենց «պատմական» հայրենիքից կտրելու եւ Ադրբեջանից նրանց ցույց տրվող օգնությունը (կարելի է չկասկածել՝ հակավրացական) կասեցնելու նպատակով: Այսինքն, հարցը քաղաքական է, ոչ թե կրոնական, եւ դա Միխեիլ Սաակաշվիլու նպատակասլաց քաղաքականությունն է:

Ինչեւէ, հազիվ թե վրացիներին հաջողվի իրենց ենթարկել կեսմիլիոնանոց մուսուլման ադրբեջանցիների կրոնական կյանքի կարգավորման կամ լուծման հարցերը, ինչ բնույթի պետական թե կրոնական կառույցներ էլ որ ստեղծվեն: Գուցե արդեն մեկ սերունդ հետո այդ «համայնքը» կդառնա մեկ միլիոն եւ նորանոր բազմաբնույթ քաղաքական պահանջներ կներկայացնի «հյուրընկալ վրացական պետությանը: Ի՞նչ արած, սերը հասուցում է պահանջում:

Մնում է միայն զարմանալ, թե ունենալով նման անախորժ ներքին խնդիր, ինչու են վրացիները իրենց «կենարար էներգիան ծախսում զանազան հակահայկական գործողությունների վրա:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

ՀԱԿԻՐՃ

# ՆԱՏՕ-ի ռմբակոծումներից զոհվել են 700 խաղաղ լիբիացիներ

**Լիբիայի իշխանությունները ՆԱՏՕ-ին մեղադրում են, որ դաշինքի օդուժի ռմբակոծումներից երկրում արդեն զոհվել են 700-ից ավելի խաղաղ բնակիչներ: Առողջապահության նախարարության այս տվյալները երեկ հրապարակել է Լիբիայի կառավարության մամլո քարտուղար Մուսա Իբրահիմը Տրիպոլիում կազմակերպված մամլո ասուլիսում:**

**Իբրահիմի խոսքերով, ռմբակոծումների սկզբից՝ մարտի 19-ից մինչեւ մայիսի 26-ը արդեն արձանագրվել էին 718 սպանված եւ 4067 վիրավոր, որոնցից 433-ի վիճակը ծանր է:**

**Մուսա Իբրահիմին վկայակոչող Ֆրանսպրեսը ընդգծում է, որ խոսքը միայն խաղաղ բնակիչների մասին է: Հրապարակված թվերը չեն վերաբերում սպանված եւ վիրավոր զինծառայողներին, քանի որ պաշտպանության նախարարությունը հրաժարվում է խոսել իր կորուստների մասին:**

**Ինչ վերաբերում է Լիբիայի ապստամբական ուժերի կորուստներին, մայիսի կեսերին ապստամբները հայտարարեցին, որ քաղաքացիական պատերազմի ընթացքում Մուամմար Քադդաֆիի կողմնակիցները սպանել են 10 հազար մարդու: Բացի դրանից, ապստամբների տվյալներով, 30 հազար մարդ վիրավորվել է, իսկ 20 հազար՝ անհետ կորել:**

# Մլադիչը Հաագայում սպասում է իր դատին

**Պատերազմական հանցագործությունների կասկածանքով Սերբիայում ձերբակալված Սերբական Հանրապետության զինված ուժերի շտաբի նախկին պետ Ռատկո Մլադիչը արտաքսվել է Հաագա, որտեղ պետք է դատվի նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող Միջազգային դատարանում: Համապատասխան հայտարարությամբ հանդես է եկել Սերբիայի արդարադատության նախարար Սնեժանա Մալովիչը:**

**Արտաքսումից մի քանի ժամ առաջ սերբական դատարանը մերժել էր Մլադիչի եւ նրա փաստաբանների այն գանգատարկումը, թե նախկին գեներալին չի կարելի արտաքսել նրա թույլ առողջության պատճառով: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Հաագայի դատարանը խոստացել է ապահովել Մլադիչին անհրաժեշտ բուժսպասարկմամբ:**

**Սերբ դատավորները արտաքսումից առաջ կասկածյալին թույլատրել են այցելել 1994-ին անձնասպան եղած դստեր գերեզման:**

**Սպասվում է, որ Հաագայում Մլադիչին կմեղադրեն պատերազմական հանցագործությունների, այդ թվում՝ 1995-ին Սրեբրենիցա քաղաքում հազարավոր մահմեդական տղամարդկանց ցեղասպանության մեջ:**

**Մլադիչի փաստաբանները կտրականապես հերքում են բոլոր մեղադրանքները, հայտարարելով, որ պատերազմի ժամանակ բոլոր հանցագործությունները կատարվել են առանց իրենց պաշտպանյալի իմացության, քանի որ նա զբաղվում էր զուտ ռազմական հարցերով:**

**Նախկին գեներալը արդարադատությունից թաքնվում էր 1996-ից: Այս տարվա մայիսի 26-ին նրան ձերբակալեցին Սերբիայի հյուսիսում: Ձերբակալությունից հետո սերբական դատարանը վճռեց նրան արտաքսել Հաագա:**

# Ասադը ներում է շնորհել բոլոր քաղբանտարկյալներին

**Սիրիայի նախագահ Բաշար Ասադը ստորագրել է քաղբանտարկյալների համաներման հրամանագիր: Համաներումը տարածվում է նաեւ երկրում արգելված «Մուսուլման եղբայրներ» շարժման վրա, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Նախքան հրամանագրի ստորագրումը երկրում երկու ամիս տեղի էին ունեցել հակակառավարական ելույթներ: Ընդդիմության ցույցերը ցրելիս կառավարական կառույցները եւ զորքերը Սիրիայի քաղաքներում ձերբակալություն էին կատարել:**

**Ընդդիմության ներկայացուցիչները նախագահ Ասադի քայլը համարում են անբավարար: Նախագահի հակառակորդներից մեկը Ֆրանսպրեսի թղթակցի հետ զրուցելիս ասել է. «Մենք համաներում պահանջում էինք մի քանի տարի առաջ»:**

**Սիրիայում ծայրահեղ մահմեդականների ելույթները սկսվեցին մարտի 15-ին: Մայիսի վերջերին արաբական իրավապաշտպան կազմակերպությունները հաղորդեցին, որ երկու ամսում Սիրիայում սպանվել է 1062 մարդ:**



**Բաշար Ասադը պարբերաբար զիջումներ էր անում ընդդիմությանը: Նա մասնավորապես շեշտեց ժողովրդավարական բարեփոխումների անհրաժեշտությունը, փոխեց կառավարության կազմը եւ վերացրեց 50 տարի երկրում գործած արտակարգ դրությունը, բայց միաժամանակ արգելեց ամեն տեսակի ցույցերը: Այդ արգելքը, սակայն, էլ ավելի ակտիվացրեց ընդդիմության գործողությունները:**

**Պ.Ք.**

# Բջջային հեռախոսը կարող է քաղցկեղ հարուցել

**Բջջային հեռախոսների էլեկտրամագնիսական դաշտերը կարող են առաջացնել քաղցկեղային հիվանդություններ ու վտանգավոր են մարդու առողջության համար: Այդ մասին Լիոնում լիագումար նիստի ավարտից հետո հայտարարել են Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալության փորձագետները:**

**Մեկուկես տասնյակ երկրների գիտնականներին միավորող փորձագիտական հանձնաժողովի ներկայացուցիչ Ջոնաթան Սամետի խոսքերով, «առ այսօր հավաքված են բավական շատ ապացույցներ, որոնք թույլ են տալիս բջջային հեռախոսները մտցնել մարդու առողջության համար վտանգավոր քաղցկեղային սարքերի ցանկում»:**

**«Համաճարակաբանական տարբեր հետազոտություններից պարզվել է, որ բջջային հեռախոսները մեծացնում են գլխուղեղի ուռուցքների՝ գլիոմաների զարգացման վտանգը», շարունակում է Սամետը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:**

**Գործակալության փորձագետների գնահատմամբ, բջջային հեռախոսները դասվում են «հավանաբար քաղցկեղային նյութերի ու գործոնների» շարքին:**

**Գործակալությունը ստեղծվել է 1965-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության հովանու ներքո:**

**Մասնագետները ընդգծում են, որ իրենք չեն հորդորում հրաժարվել բջջային կապից. պարզապես չպետք է չարաշահել բջջային հեռախոսները:**

**Պ. Ք.**

# Սեդա Վերմիշեւայի բանաստեղծությունը

«Վերադարձ դեպի ինձ» հատընտիրը Սեդա Վերմիշեւայի (մայրենի լեզվով թարգմանած) դարձն է իր ինքնության արմատներին: Բանաստեղծուհին ժողովածուից ժողովածու կրկնում է դարձը դեպի իր էությունը, որը յուրաքանչյուր անգամ նոր հայտնության սկիզբ է: Նա խոսում է կրկին, բայց ոչ նորից:

Դարձի ռիթմերը հաստատում են, որովհետեւ բանաստեղծուհին միշտ միեւնույն ցավի կետից է սկսում ինքնաորոնումը եւ ավարտում գրեթե միեւնույն՝ անփոփոխ ցավի կետում: Սկզբի եւ ավարտի միջեւ ձգվում է հոգու դրաման, եւ բանաստեղծուհին հրաժարվում է «վարագույրից». ցավը մնում է մերկ ու անավարտ: Մեր առջեւ տեսանելի է, պայմանականորեն ասած՝ հոգու բեմը (հոգու տարածքը):

Ամեն մի բանաստեղծություն իրենով շարունակում է դրաման: Կառուցվածքային տեսանկյունից հոգեկան ապրումների երեւակումը տարբերակային է, իսկ բուն դրաման միասնական է ու անկրկնելի:

Սեդա Վերմիշեւայի պոեզիան ոչ թե ներկայացնում է դրամա, այլ ներկայանում է որպես դրամա: Նրանում, ինչպես կավը, եփվում, թրծվում է ցավը եւ, մի տեսակ, առարկայանում: Ցավը տնտեսել է տալիս բանաստեղծական «տարածքը», «հաշվարկել» բառերը, սեղմել պատկերները եւ ընդգծել ինքնաորոնումի պոեզիայի ենթատեքստը: Մենք այն տպավորությունն ենք ստանում, որ Ս. Վերմիշեւայի բանաստեղծությունն անավարտ է ոչ միայն վերջում, այլեւ... սկզբում: Ասել է, թե այդ սկիզբը նախադիր այլ սկիզբներ ունի, որոնք հաղորդվում են նախորդ ժողովածուներից՝ վկայելով ապրում-զգացմունքի մշտատեւության ու սեւեռումի մասին: Մենք, այսպիսով, կարող ենք խոսել Ս. Վերմիշեւայի պոեզիայի «անսկիզբ» սկզբի բարդ բանարվեստի մասին:

Կար ժամանակ, երբ մեզանում եւս բանաստեղծությունը պաթոսից անբաժան էր, իսկ Ս. Վերմիշեւան տեղ չտվեց այդ ախտանիշին: Բանաստեղծուհին ընտրեց այն Սկիզբը, որ բնորոշ է ինքն իրեն հասցեագրված քնարական նամակին, ասել է, թե՝ մենախոսությանը: Բանաստեղծությունը հոգու ներքին շերտերից է լույս աշխարհ գալիս՝ Ս.Վերմիշեւայի պարագայում՝ դեռ թանաքը չչորացած: Նրա պոեզիան գրված է ոչ հաղորդելու, այլ հաղորդության համար: Հոգու շարժումը միշտ վերածվում է շրջապտույտի. ներդաշնության պայմանը դառնում է ցավի «սառեցումը»:

Վերմիշեւան սրտագրում է տողերով, եւ մասերի դողը տողերին տալիս է նույն այն բեկուն պատկերը, ինչպիսին իրականում կա սրտագրական թղթին: Եվ, բնականորեն, անթաքույց է նաեւ ջղաձիգ ռիթմը:

Բանաստեղծության ձեւը «հոգեկան հարկի» գծանկար է: Բովանդակության եւ ձեւի առումով Ս. Վերմիշեւայի բանաստեղծության մեջ առանձնահատուկ ոչինչ չես տարբերակի. միավորները միասնական եւ անանջատ են: Հոգեկան պոռթկումը միասնականացնում է կառուցվածքը, ջնջում պոետիկական հյուսվածքի պատրանքը:

Ս. Վերմիշեւան «սրտի հիվանդության» ճիշտ «ախտորոշումով» շատերին է բուժում: Նրա պոեզիայում տեր-տիրական են մաքուր զգացմունք-ապրումները, որոնք դառնում են ժողովածուների միավորման հիմքը: Զգացմունքն է, որ ժողովածուները միավորում է մեկ Ձայնի մեջ: Դա հոգու ցավին Խաչվածի ձայնն է:

Խաչելություն՝ բառերով, որին հաջորդում է հառնումի խաբկանքը:

Սիրո պատարագը հնչում է մաքուր, եւ առանց միստիկ անորոշության: Վերմիշեւայի բանաստեղծությունը «աշխարհիկ է», նրանում չկան ոչ հստակ ապրումներ, կիսատ մտքեր: Բնորոշը լիասությունն է: Բանաստեղծուհին ոչինչ չի զիջում բառի հպարտությունից, բառի դասական կերպից: Թեկուզ հոգու խոնարհ պահին՝ բառը հպարտ է: Ապրումը լիարժեք է, ինչը տանում է դեպի սիրտն ու հոգին իրար կապող ճշմարտության խորքը:

Ս. Վերմիշեւան Հայաստանի երգիչ է. դիմում է նրան ու խնդրում, որ իր հոգին «բարձր ճախրանքից» տուն բերի.

**Երկիր իմ, Դու ես բեր նրան տուն, Նա քեզ հետ պիտի լացի ու Պտտվի... («Կապույտ է մթնշաղը»):**

Ոգու հետկանչի աղոթասացությունը խոր ապրումների հետեւանք է: Հոգին պետք է օդեղեն սավառնումներից հետ գա, ձուլվի հայրենիքին, միայն այս կերպ իր թռիչքն ունենա: Բանաստեղծուհին հայրենիքի կերպարի մեջ է ինքնադարձ:

Ի վերջո, Սեդա Վերմիշեւան ելնում է շարժման սկզբի եւ հեռապատկերի միասնությունից: Վրա է հասնում քարի մեջ թաղված լինելու ցանկությունը, որը հավերժի դեմ ընդվզումի հայտ է:

Սեդա Վերմիշեւայի բնապատկերը ժլատ է. նա գրաֆիկի հայացքով է դիտում բնությունը, որսում է շատը, «արձանագրում» քիչը, նայած, թե բնությունը ինչ հետք է թողնում նրա ներաշխարհում:

Նա քամում է գույնը, գիծը, եւ «տեղադրում» բանաստեղծության մեջ՝ ըստ ներքին թելադրանքի: Բանաստեղծությունը հարուստ է հոգեբանական ու գեղարվեստական դադարներով, որոնք եւ դառնում են կառուցվածքի հիմնատարրերը: Վերմիշեւան գրում է միշտ էլ արդիականորեն: Նրա պոեզիան շնչում է ժամանակի հետ միասին:

### Ճակատագրի նշանով բառի որոնումը

«Խռովահույզ քնքշություն» ժողովածուի բանաստեղծություններից մեկը («Гневаюсь ли...») Ս. Վերմիշեւային կապում է բլոկյան ակունքների հետ.

**Զայրանում եմ արդյոք, Գանգատվում, Լալիս եմ, Աղոթում Ռուսաստանի համար, Հիսուսը Երեւում է Երկնքում...**

Երկրում տուն տանող ճանապարհ չկա, թեեւ երկիր-Քրիստոս զուգահեռը պետք է, որ բոլորին սեր ու գութ, տուն ու ծածկ ապահովի: Սակայն Ս.Վերմիշեւայի համար երկիր-Քրիստոս համեմատությունը խոր դրամատիկական ընկալման հետ է կապված: Նման համեմատությունը բավական է զգալու ռուսական երկիրն ամբողջությամբ՝ «մարմնով» ու «հոգով»: Նույնիսկ բնապատկերները փոխաբերական դաշտում են, թեեւ Ս. Վերմիշեւան իրական ապրումի, ճշգրիտ ռիթմի բանաստեղծ է: Սակայն նա ռեալությունը ենթատեքստում վերափոխում է փոխաբերականացված ռեալության: Տեքստն ու ենթատեքստը ներթափանցված են: Դասականն ու արդիականը տալիս են այդ հնարավորությունը: Կարդում ես Ս. Վերմիշեւայի բանաստեղծությունը եւ զգում ես՝ որքա՜ն զուսպ են հույզերը, բայց եւ որքան խորն ու «ընդհատակյա»:

Ս. Վերմիշեւան նպատակ չունի արտաքինից կերպավորելու Ռուսաստանը: Ներքին կերպավորումը (Քրիստոս-Ռուսաստան) շարունակվում է աննկատ, աստիճան առ աստիճան: Բանաստեղծուհու խոհը առարկայական է: «Աղոթքն» ու «ներումը» անմիջական են, ոչնչով չեն առանձնանում բառերի ռիթմիկ տարածքում: Սկսած Դոստոեւսկուց, «ներումն» ու «աղոթքը» միասին են «դատարկ ճանապարհի», «ցրտի», «սառույցից սառն ճառագայթների», «ամենուր խավարի» հետ:

Ալ. Բլոկը հեղափոխության մեջ տեսնում էր Քրիստոսին: Ս. Վերմիշեւան Քրիստոսին որոնում-տեսնում է Ռուսաստան-երկրի մեջ: Փրկչի որոնումը տարակերպ է: Վերմիշեւան անձնականացնում է երկիրը, նրա «մարմնում» տեսնում փրկչական հոգի: Նման զգացումը



տիպական է Դոստոեւսկու, Տոլստոյի, Բլոկի գրականության համար: Նրանց երկերում ոչ թե խաչելության գնացող, այլ կենդանի Քրիստոսն է: Քրիստոսի էությունը խոսքի միջոցով անցել է Ս.Վերմիշեւային: Միայն խոսքի՞ միջոցով: Կավելացնեինք՝ ռուսական տափաստանի, ցրտի, խավարի, լույսի միջոցով: Տափաստանը կենդանի հոգի ունի, Քրիստոսի պես հպումով կարող է բուժել: Ս.Վերմիշեւան ունկնդիր է երկրի արյան տրոփին, զարկերակի բաբախին: Ցավը վառում է նրա շապիկը: Սա հրաշալի պատկեր է: Եկեք հիշենք «կրակե շապիկ» արտահայտությունը: Երկրի սերն ու տառապանքն են ծնում «կրակե շապիկ» պատկերը:

Բանաստեղծությունը, խոսքը եւս «կրակե շապիկ» են, երբ բանաստեղծը երկրի տառապանքի իր բաժինն է վերցնում: Ս.Վերմիշեւան պահպանում է Ալ. Բլոկի, Պաստեռնակի պոեզիայի՝ հայրենիքի ճակատագրի եւ անձնական ճակատագրի նույնականության լարված զգացողությունը՝ ներկա ժամանակի կամերային ու արտիստիկ խոսքի հասկանիշներով: Բանաստեղծուհին տիրում է մեր անհանգիստ դարի ռիթմին, շրջանցելով առիթմիան: Նա գտել է պոեզիայի հոգին, որը նույնանում է Ռուսաստանի հոգու հետ, երբ ինքն է ստեղծագործում: Ս. Վերմիշեւան հեռու է միստիկ տեսիլից. կենդանագրում է հոգու շարժումը՝ չմոռանալով գույնի իրեղենությունը: Ռուսաստան-Քրիստոս միավորումը մեզ հուշում է, որ բանաստեղծուհին ի մի է բերում Ռուսաստան երկրում ապրող բոլոր մարդկանց անհատական հոգիները եւ ստանում հավաքական անտրոհելի արժեք: Ահա թե ինչպես Աստված «երեւում է լուսամուտից»:

Ռուսաստան երկիրը, ըստ Վերմիշեւայի, հոգեկանով օժտված, զգացող էակ է, որի «մարմինը» կերտված է «մտածող նյութով»:

***

Երկիրը ձգում է իր խորքով: Վերմիշեւայի պոեզիան ծնունդ է առնում խորքից: Կանչողը խաչվածի ձայնն է: Բանաստեղծության մեջ, դրա հետ մեկտեղ, լսելի է Հարության կանչը՝ հանգիստ տոնայնությամբ: Բայերը շատ են Ս. Վերմիշեւայի պոեզիայում:

Ս. Վերմիշեւան ստեղծագործում է կենսական բառապաշարով: Նա «կոմպոզիցիայի» մեջ է ընդգրկում միայն կենսականը: Բանաստեղծուհին խորքից է խոսում: Սակայն խորքը նրան չի անջատում, չի կանգնեցնում պաստեռնակյան խորհրդավոր հեռավորության վրա: Խորքը առաջ է բերվում: Ժեստերը փոխարինվում են բառերով:

Կցանկանայինք առանձնացնել «Բոլոր աշխարհների միջեւ» բանաստեղծությունը: Ռեքվիեմը ծավալվում է «երկնքի եւ երկնքի», «մշուշի եւ մշուշի», «իմ եւ քո» միջեւ: Բանաստեղծությունը երկրի եւ երկրի, խորքի եւ խորքի անջատվածության ողբերգության հնչյունն է եւ դրանց ձգտման ու միավորման օրատորիան: Պետք է որ հաղթահարվի ներքին ողբերգությունը, սակայն բանաստեղծուհին շարժումը դանդաղեցնում է՝ նրա բնական ռիթմին համապատասխան: Ռիթմերը հետ են գալիս երկնքից, հատույթավորում մարդու ներքին շարժումները: Օրատորիան ողբերգությանն է հյուսում աղոթասացությունը: Անկեղծ ասած, աղոթասացության փոխարեն սեփական ճակատագրի ներքնառիթմ հաշվետվությունն է:

Կան դիմումներ երկիր-Քրիստոսին. «Ինձ հաց պարգեւիր», «Պարգեւիր ինձ բառ», «Պարգեւիր՝ ինչ կպատահի»:

Երեւան է գալիս վախճանաբանական տեսիլը. Ժամանակն ավարտվեց... Հարկ է շատերին ներել:

Քրիստոնեական ներման խնդրանքը երկրի ծալքերում է: Ներումը Ռուսաստանի սրտում է, որին հավատում է բանաստեղծուհին:

Երկիրը բանաստեղծուհու բոլոր զիգզագների, ինքնադատումների միջով տանում է դեպի հավասարակշռություն: Ռուսաստանի մեջ կա քրիստոսական մի ուժ, որը խղճի կշռաքարերով հավասարակշռում է ճակատագրերը: Այս զգացողությամբ Ս.Վերմիշեւան գեղարվեստորեն քննում է կոնկրետ մի կյանք ու ճակատագիր՝ խիղճը ոգի դարձած երկրի «ձգողականության դաշտում»: Բանաստեղծուհին ընդառաջ է գնում ռուսական ոգու եւ ճակատագրի նշանով բառի որոնմանը:

ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# Թբիլիսիում նշել են սայաթնովյան վարդատոնը



Մայիսի 29-ին Թբիլիսիի Ս. Գեւորգ եկեղեցու հարեւանությամբ գտնվող պատմական Մեյդան հրապարակում տեղի է ունեցել մայիսյան ավանդական սայաթնովյան վարդատոնը: Տոնին ներկա են եղել հյուրեր Հայաստանից, Արցախից եւ Վրաստանի տարբեր անկյուններից:

Հավաքվածներին տոնի առթիվ շնորհավորեց Վրաստանում Հայաստանի դեսպան **Հովհաննես Մանուկյանը**: Նա մասնավորապես ասաց. «Սա մեր փոքրիկ պարտականությունն է այն մեծ ստեղծագործողի առջեւ, որի անունն է Սայաթ-Նովա: Այն ժառանգությունը, որը մեր մշակույթին տվել է Սայաթ-Նովան, անգնահատելի է: Թերեւս չկա մի հայ մարդ, մի հայ մանուկ, որի կյանքը եւ որպես անհատ ձեւավորման պրոցեսը անցած չլինի Սայաթ-Նովայի հնչյունների ներքո: Սակայն ամեն տարի այս տոնը նշելիս ամեն մեկս պետք է մի պահ մտածենք, թե արդյո՞ք մենք ամեն ինչ արել ենք, որպեսզի արժանվույն գնահատենք Սայաթ-Նովայի արվեստը, աշխարհին իսկապես մատուցենք այն մեծ ժառանգությունը, որը թողել է նա մեզ»:



Սայաթ-Նովայի ստեղծագործական ժառանգության մասին ելույթներ ունեցան նաեւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի նախագահի ազգային փոքրամասնությունների գծով խորհրդական Վան Բայբուրդը եւ Երեւանից ժամանած հյուրեր, նաեւ ընթերցվեց ողջույնի ուղերձ՝ Հայաստանի գրողների միության անունից:

Տոնի կապակցությամբ կայացած համերգում հանդես եկան Երեւանից ժամանած «Սայաթ-Նովա» համույթը՝ Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ, Թբիլիսիի «Ջեյրան» պարային համույթը՝ Սվետլանա Երիցյանի ղեկավարությամբ, Թբիլիսիի պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասաններ, մենակատարներ Հենրիխ Պողոսյանը, Աննա Խանչալյանը, Անահիտ Հարությունյանը եւ ուրիշներ:

# Ռոման Բերեզովսկի. «Հետաքրքրական խաղ է սպասվում, որի ելքը դժվար է գուշակել»

***36-ամյա դարպասապահ Ռոման Բերեզովսկին Հայաստանի հավաքականի կազմում ամենափորձառուներից մեկն է: Արդեն 16-րդ մրցաշրջանն է, ինչ Ռոմանը հուսալիորեն պաշտպանում է Հայաստանի հավաքականի դարպասը: Առաջիկա հանդիպումը հավաքականի կազմում կլինի Բերեզովսկու 65-րդ խաղը: Չնայած վնասվածքի պատճառով նա չմասնակցեց «Խիմկիի» վերջին 2 հանդիպումներին, սակայն ժամանել է Երեւան ու նախապատրաստվում է ռուսների հետ ընտրական մրցախաղին: Երեւան մեկնելուց առաջ նա հարցազրույց է ունեցել «Սպորտ Էքսպրեսի» թղթակցի հետ, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:***



**- Ռոման, ինչպե՞ս է ինքնազգացողությունդ:**

- «Տորպեդոյի» հետ խաղում վնասել էի մեջքս: «Խիմկիի» ղեկավարությունն ընդառաջեց ինձ ու Հայաստանի հավաքականին եւ ներարկումներով խաղացնելու փոխարեն թույլատրեց հանգիստ պայմաններում բուժվել:

**- Ինչպիսի՞ հիշողություններ են մնացել ՌԴ հավաքականի հետ Երեւանում կայացած մարտյան հանդիպումից:**

- Այդ խաղի նախօրեին անհանգիստ էի: Նախորդ մրցաշրջանն ու այս տարվա սկիզբն անցկացրել էի առաջին խմբում եւ մտահոգ էի, թե արդյոք դա չի՞ անդրադառնա իմ խաղի վրա: Շատ էի վախենում հուսախաբ անել հավաքականին: Սակայն խաղի օրն անհանգստությունն անցավ, կարողացա լիովին կենտրոնանալ հանդիպման վրա: Կարծում եմ, որ հաջողվեց խուսափել լուրջ սխալներից:

**- Շատ համեստ չե՞ս գնահատում ելույթդ այդ խաղում, որում Հայաստանի հավաքականի կազմում լավագույն ֆուտբոլիստ ճանաչվեցիր: Չէ՞ որ հիմնականում քո վստահ խաղի շնորհիվ հաջողվեց խաղն ավարտել ոչ-ոքի:**

- Այդ խաղում ես առանձնապես ծանրաբեռնված չէի: Ճիշտ է, ռուսները վստահ սկսեցին խաղը, սակայն միաժամանակ զգույշ էին գործում: Միայն առաջին խաղակեսի միջնամասում նրանց հաջողվեց որոշ ժամանակ ճնշում գործադրել մեր դարպասին: Անկեղծ ասած, երկու թիմերից էլ ավելին էի սպասում, մանավանդ որ «Հանրապետական» մարզադաշտի խոտածածկը հիանալի վիճակում էր: Սակայն հավանաբար ֆուտբոլիստների մեծամասնությունը դեռեւս անհրաժեշտ մարզավիճակում չէր: Օրինակ, մեր հավաքականի առաջատար Հենրիխ Մխիթարյանն իր հնարավորությունների 70 տոկոսը դրսեւորեց: Երեւի դրանց հետեւանքով էլ այդ խաղում պաշտպանությունը գերազանցեց հարձակվողներին ու գոլային պահեր քիչ ստեղծվեցին:

**- Այդ պահերից որո՞նք կվերհիշեք:**

- Երկրորդ խաղակեսի սկզբին Յուրա Մովսիսյանը կարող էր բացել հաշիվը, սակայն վրիպեց նպաստավոր դիրքից: Դա մեր հավաքականի ամենաիրական գոլային պահն էր: Մեր դարպասին էլ գոլային 3-4 պահեր ստեղծվեցին, սակայն մեզ հաջողվեց չեզոքացնել վտանգը:

**- Գոլազուրկ ոչ-ոքին օրինաչա՞փ էր:**

- Կարծում եմ, այո: Թեեւ մեզ համար այդ խաղը կարող էր մի փոքր ավելի հաջող կամ էլ անհաջող դասավորվել: Իսկ ոչ-ոքի արդյունքը մեզ հնարավորություն է ընձեռում շարունակել պայքարը ուղեգրի համար:

**- Հայաստանի հավաքականի կազմում կլինե՞ն փոփոխություններ առաջիկա խաղում:**

- Հնարավոր է: Թեեւ չեմ կարծում, թե դրանք անհրաժեշտ են: Ներկայումս Հայաստանի լավագույն ֆուտբոլիստներն անհրաժեշտ մարզավիճակ են ձեռք բերել, ուստի վստահ եմ, որ Սանկտ Պետերբուրգում ավելի լավ կխաղան, քան Երեւանում հանդես եկան:

**- Ի տարբերություն առաջին հանդիպման, «Պետրովսկու» լեփլեցուն տրիբունաներն աջակցելու են ՌԴ հավաքականին:**

- Ինձ լավ հայտնի է, թե ինչպես են երկրպագում ու իրենց թիմին աջակցում պետերբուրգցի ֆուտբոլասերները: Չէ՞ որ 6 տարի հանդես եմ եկել «Զենիթում», հետագայում էլ այլ թիմերի կազմում խաղացել եմ «Պետրովսկում»: Նույնիսկ քո թիմի դեմ երկրպագող լեփլեցուն մարզադաշտը լրացուցիչ լիցք է հաղորդում ֆուտբոլիստներին: Մեզ համար շատ կարեւոր է չափից դուրս չանհանգստանալ, խաղից առաջ «չվառվել»:

**- Ինչպե՞ս ես վերաբերվում Ռոման Շիրոկովի այն հայտարարությանը, որ նա արել էր երեւանյան խաղից հետո, նշելով, թե սեփական հարկի տակ հարյուր տոկոսով կհաղթենք Հայաստանի հավաքականին:**

- Լավ է, որ ֆուտբոլիստն այդպես վստահ է իր ուժերին, իր թիմին: Սակայն Հայաստանի հավաքականում էլ պարտվողական տրամադրություն չի տիրում: Կարծում եմ, որ ավելի շատ խաղը կընթանա մեր կիսադաշտում, սակայն երաշխավորում եմ, որ մենք էլ մրցակցի դարպասի մոտ գոլային պահեր կստեղծենք:

**- Մրցակցի ո՞ր ֆուտբոլիստներից ես ավելի շատ տհաճություն սպասում:**

- Երբ գնդակը Արշավինի, Զիրյանովի մոտ է, մշտապես պետք է աչալուրջ լինես, որոնք կարող են գոլային փոխանցում կատարել: Սակայն գլխավոր վտանգը ներկայացնում է Կերժակովը, որի յուրաքանչյուր հարվածը վտանգավոր է: Մենք լավ ենք ուսումնասիրել մրցակցին եւ կարող ենք դիմագրավել ու վտանգավոր պահեր ստեղծել ռուսների դարպասին: Կարծում եմ, որ շատ հետաքրքրական խաղ է լինելու, որի ելքը չեմ կարող գուշակել:

ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔ

# Երիտասարդական հավաքականն էլ սկսեց նախապատրաստությունը




**Երեկ Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզաբազայում սկսվեց Հայաստանի երիտասարդական հավաքականի ուսումնամարզական հավաքը: Մեր երիտասարդ ֆուտբոլիստները նախապատրաստվում են Եվրոպայի 2013-ի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի մեկնարկային խաղին: Հունիսի 7-ին «Հանրապետական» մարզադաշտում հայ ֆուտբոլիստները հյուրընկալելու են Չեռնոգորիայի ընտրանուն: Խաղը սկսվելու է ժամը 20-ին:**

**Հայաստանի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանն ուսումնամարզական հավաքի է հրավիրել 22 ֆուտբոլիստի: Նրանցից միայն երկուսն են լեգեոնական: Առաջիկա հանդիպմանը նախապատրաստվում են բելգիական «Ռոզելարում» հանդես եկող կիսապաշտպան Մասիս Ոսկանյանը եւ Չեխիայի «Բանիկ Մոստի» հարձակվող Գեւորգ Բադալյանը: Երկու ֆուտբոլիստներն էլ Հայաստանի երիտասարդական հավաքականի կազմում մասնակցել են Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական նախորդ մրցաշարի հանդիպումներին: Դարպասապահի հարցում մարզիչներն ընտրություն կկատարեն փյունիկցիներ Արսեն Պետրոսյանի եւ Կարեն Իսրայելյանի միջեւ: Պաշտպաններից հավաքական են հրավիրվել փյունիկցիներ Տարոն Ոսկանյանը, Վարազդատ Հարոյանը, «Բանանցի» ֆուտբոլիստներ Հովհաննես Համբարձումյանը, Գագիկ Դաղբաշյանը, Գրիշա Խաչատրյանն ու Արգիշտի Պետրոսյանը, գանձասարցի Ալեն Համբարձումյանը եւ «Միկայի» խաղացող Անդրանիկ Ոսկանյանը:**

**Կիսապաշտպաններից հավաքին մասնակցում են փյունիկցիներ Գագիկ Պողոսյանը, Արտակ Եդիգարյանը, Կամո Հովհաննիսյանը, Արտակ Ալեքսանյանը, «Բանանցի» ֆուտբոլիստներ Սարգիս Կարապետյանը, Վալտեր Պողոսյանը, Բենիկ Հովհաննիսյանը:**

**Հարձակվողներից բացի Գեւորգ Բադալյանից, մարզումներին մասնակցում են նաեւ փյունիկցի Հովհաննես Հովհաննիսյանն ու արարատցի Գեւորգ Կարապետյանը:**

# Պետրոսյանը կրկին հաշտություն կնքեց

**Հնդկաստանում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրում էլ Տիգրան Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց հնդիկ Սվայանգսու Սաթյապռաջիանի հետ: 5 տուրից հետո Պետրոսյանը վաստակած 4 միավորով ընթանում է 16-րդ տեղում: Առաջատարը հնդիկ գրոսմայստեր Մագեշ Պանշանաթանն է, որը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Էնամուլ Հուսեյնին: 4,5-ական միավորով առաջատարին հետապնդում են Սթանուն, Պրասադ Արունը եւ Աբհիջեթ Գուպտան: 6-րդ տուրում Պետրոսյանը սեւերով կխաղա հնդիկ շախմատիստ Ադիթյա Ուդեշիի հետ:**

# Դիկ Ադվոկաս. «Քննադատությունը պետք է օգնի հայերի դեմ ուժերի լրիվ ներդրումով խաղալու»

***Ռուսաստանի հավաքականը Հայաստանի ընտրանու հետ Սանկտ Պետերբուրգում կայանալիք ընտրական մրցախաղին նախապատրաստվում է Մոսկվայում: Հավաքականի գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկասը մամուլի ասուլիսում պատասխանել է լրագրողների հարցերին:***

**- Ինչպե՞ս է ընթանում հավաքականի նախապատրաստությունը Հայաստանի եւ Կամերունի ընտրանիների հետ առաջիկա հանդիպումներին:**

- Կարեւորը ոչ միայն մարզումներն են, այլ նաեւ շփումը ֆուտբոլիստների հետ: Պարապմունքների ընթացքում պետք է բացահայտվի ֆուտբոլիստների ֆիզիկական վիճակը, հարկավոր է գիտենալ, թե ով ինչպիսի մարզավիճակում է: Ներկա պահին ֆուտբոլիստները տարբեր մարզավիճակներում են: Արտերկրում հանդես եկող ֆուտբոլիստներն արդեն ավարտել են երկարատեւ մրցաշրջանը, իսկ Ռուսաստանում խաղացողները դեռեւս շատ հանդիպումների չեն մասնակցել:

**- Ձեզ ինչո՞վ հրապուրեցին Ալեքսանդր Շեշուկովն ու Ալեքսանդր Ռյազանցեւը, որոնց վերջին պահին ընդգրկեցիք հավաքականում:**

- Առաջին հերթին ցանկանում էի փոփոխություն մտցնել մարզումային գործընթացում, որպեսզի 11 հոգուց բաղկացած երկու կազմ ունենայինք: Նշված երկու ֆուտբոլիստներն իրենց լավ են դրսեւորել «Սպարտակում» եւ «Ռուբինում», այժմ պետք է ապացուցեն, որ արժանի են հավաքականում խաղալու:

**- Ինչո՞ւ որոշեցիք ուսումնամարզական հավաքն անցկացնել Մոսկվայում, այլ ոչ թե Սանկտ Պետերբուրգում, որտեղ կայանալու է հանդիպումը:**



- Սկզբում որոշել էինք հավաքն անցկացնել Սանկտ Պետերբուրգում, սակայն տեղի պայմանները մեզ չբավարարեցին:

**- Ինչպիսի՞ ֆուտբոլ կցուցադրի հավաքականը Հայաստանի ընտրանու հետ խաղում:**

- Մեզ շատ դժվարին հանդիպում է սպասում: Հուսով եմ, որ «Պետրովսկի» մարզադաշտը լեփլեցուն կլինի: Ընկերական հանդիպումներում կրած անհաջողությունների համար հավաքականի հասցեին ուղղված քննադատությունը պետք է նպաստի, որ ֆուտբոլիստները Հայաստանի հավաքականի հետ խաղում ներդնեն իրենց ողջ ուժերն ու կարողությունները: Միեւնույն ժամանակ, ընտրական մրցախաղերում ֆուտբոլիստներից դժգոհելու առիթներ չունենք: Յուրաքանչյուր խաղում մեր ֆուտբոլիստները գործում էին ուժերի լրիվ ներդրումով:

**- Ի՞նչ եք կարծում, ՌԴ հավաքականն արդեն ունի՞ խաղային իր ձեռագիրը:**

- Ընտրական մրցախաղերում մենք տակտիկական նույն խաղաոճով ենք գործել: Պարտվել ենք միայն Սլովակիայի հավաքականին, որի հետ խաղում մեր բախտը պարզապես չբերեց: Երբ ֆուտբոլիստները լավ մարզավիճակում են, ունակ են հաղթելու մրցակիցներին: Սակայն ընկերական հանդիպումներում մեր ֆուտբոլիստների ֆունկցիոնալ վիճակը բավարար չէր, ուստի մրցակիցները լրջորեն դիմադրեցին:

**- Ինչպե՞ս կգնահատեիք Անդրեյ Արշավինի մարզավիճակը: Ձեր գլխավորությամբ «Զենիթում» հանդես գալուց հետո նա առաջադիմե՞լ է, թե՞ հետընթաց է ունեցել:**

- Ես մշտապես պաշտպանում եմ իմ ֆուտբոլիստներին: Երբ գլխավորում էի «Զենիթը», մեկ անգամ չէ, որ ցանկացել եմ խաղերի ժամանակ փոխարինել Արշավինին, սակայն այդ քայլին չեմ դիմել: Եվ հաճախ է պատահել, որ նա գոլ է խփել կամ էլ գոլային փոխանցում կատարել: Նա պահն օգտագործող ֆուտբոլիստ է: Արշավինը չի կարող 90 րոպե խաղադաշտում վազել: Կարծում եմ, որ նա ոչնչով չի փոխվել:

# Դարչինյանի հավանական մրցակիցը Բախտինն է

**Բացառված չէ, որ պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի առաջին կիսաթեթեւքաշային բռնցքամարտիկ Ալեքսանդր Բախտինն իր հաջորդ մենամարտն անցկացնի քաշային երկու կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Վախթանգ Դարչինյանի հետ: Այս մասին հայտարարել է Բախտինի մարզիչ Ալեքսանդր Զիմինը: Վերջինս հայտնել է, որ Բախտինի մենեջեր Վլադիմիր Խրյունովն իրեն ասել է, որ սեպտեմբերին ծրագրել է մենամարտ Վախթանգ Դարչինյանի հետ: Սակայն դեռեւս պարզ չէ, թե այդ մենամարտը երբ եւ որտեղ կանցկացվի:**

**Մարզչի կարծիքով, Դարչինյանի հետ մենամարտն իր սանի համար հիանալի փորձություն կլինի. «Հոգեբանորեն շատ ես հոգնում այն մենամարտերից, որոնցում հաղթանակը չի բարձրացնում բռնցքամարտիկի վարկանիշը: Ուստի Ալեքսանդրին հարկավոր է այնպիսի բռնցքամարտիկների հետ մենամարտել, որոնց հաղթելու դեպքում հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել վարկանիշն ու իրավունք ստանալ պայքարելու չեմպիոնի տիտղոսի համար»:**

**Իր վերջին մենամարտը ռուսաստանցի բռնցքամարտիկն անցկացրել է մայիսի 21-ին՝ հաղթելով մեքսիկացի Խոսե Բերնասային: Հունիսի կեսերին Բախտինը կվերսկսի մարզումները: 30-ամյա բռնցքամարտիկը շահել է անցկացրած բոլոր 27 մենամարտերը:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

